Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Եսայեան

Բոլշեվիկները խուսափում

LEN
527

Դեկ
1904

ESALEM. — Critique du Parti "Hentchakiste".

ՊՐՕԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՆԱՆՔ

ԵՍԱԼԵՄ

(227)
1999

ԹՈՂ ՓԱԿՏԵՐԸ ԽՕՍԵՆ

(ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ)

Գինը՝ 50 բան.

Հրատարակութիւն
ՍՕՑ.-ԴԵՄ. ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Լեո
527

ԺՔՆԻՎ.
Կազմակերպութեան Տպարան. Rue Blanche, 8.
1904

43968-4.հ.

ESALEM. — Critique du Parti "Hentchakiste"

ՊՐՕԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ՝ ՄԻԱՆԱՆՔ

ԵՍԱԼԵՄ

ԹՈՂ ՓԱԿՏԵՐԸ ԽՕՍԵՆ

(ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ)

ԼԻՕՒ
ԳՐԱԴԱՐԱՆ

Գինը՝ 50 սանտ.

Հրատարակութիւն
ՍՕՑ.-ԴԵՄ. ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

28051-62

ԺԸՆԷՎ
Կազմակերպութեան Տպարան. Rue Blanche, 3.
1904

527-60
ՀՖ 528

ԹՈՂ ՓԱԿՏԵՐԸ ԽՕՍԵՆ

ՆԱԽԱԲԱՆ

Հայ բանւոր դասակարգը, որն արդէն բուռն հակումներ է ցոյց տալիս ըմբռնելու իր դասակարգային շահերը, ազատելու բուրժուական տենդեցների ազդեցութիւնից և կազմակերպելու իբրև ինքնուրոյն դասակարգային կուսակցութիւն՝ պիտի մի որոշ, ճիշտ և անկողմնակալ կարծիք ունենայ կազմած մեր ազգային յեղափոխական կուսակցութիւնների մասին, որոնք գործելով հայ ազգի մէջ, այս կամ այն կերպով որոշ ազդեցութիւն են ձեռք բերել նաև հայ բանւորների վրայ։ Այսպիսի մի ծանօթութիւն, հետազօտութիւն ստիպողական է դառնում նամանաւանդ կովկասահայ բանւորների համար շնորհիւ այն հանգամանքի, որ հայ ազգայնական (նացիոնալիստ) կուսակցութիւնները — Հնչակեան և Դաշնակցական — վերջին տարիս Կովկասի վերաբերմամբ մոցրին իրենց գործունէութեան մէջ յայտնի փոփոխութիւններ։ Նրանք այլևս չեն բաւականում նայելով ամբողջ կովկասահայերի, ուրեմն և կովկասահայ բանւորների վրայ, որպէս օժանդակիչ տարրի՝ Ցաճկահայաստանի անկախութիւնը ձեռք բերելու գործի համար, այլ այժմ նրանք ընդլայնում են իրենց գործունէութեան շրջանակը, սկսելով նաև Կովկասում ակտիւ անմիջական յեղափոխական գործունէութիւն՝ նպատակ ունենալով միաժամանակ կուել թէ ցարիզմի և թէ սուլթանիզմի դէմ։

Մեր նպատակից դուրս է այստեղ խօսել մի այդպիսի քայլի իսկական շարժառիթների մասին, միայն այսքանն ասենք, որ այդ բանը ոչ մի փոփոխութիւն առաջ չբերեց վերոյիշեալ կուսակցութիւնների ծրագրի և նպա-

տակի մէջ. Նրանք էութեամբ մնում են նոյնը, ինչպէս առաջ էին։ Բայց չը նայած դրան, նրանց այդ նոր քայլի հետ, այսինքն Կովկասում ևս գործելու վճիռը կայացնելու հետ զուգընթացաբար, նկատելի է դառնում հետևեալ ուշագրութեան արժանի բնորոշ երևոյթը. Նրանք ըսկըսում են ցոյց տալ — գոնէ առերևոյթս — մի չը տեսնուած բանաւորասիրութիւն, եթէ միայն կարելի է այդպէս արտայայտուել, որը, իհարկէ, մինչև այդ գոյութիւն չունէր։ Նրանք սկսում են աւելի շատ ուշագրութիւն դարձնել բանաւորների մէջ գործելու վրայ, նոյնիսկ ուզում են մշակել բանաւորների համար յատուկ պահանջներ և այլն. մի խօսքով, նկատելի է դառնում մի ձգտումն՝ որքան կարելի է աւելի հաճոյանալ բանաւորներին և գրաւել նրանց դէպի իրենց կողմը։ Բայց դա դեռ բոլորը չէ. Նրանք աւելի հեռու են գնում. բանից դուրս է գալիս, որ այդ կուսակցութիւնները իրենց հրապարակ գալու առաջին օրից ի վեր "սոցիալիստական„ են եղել, որ նրանց ծրագիրները սոցիալիստական են և ուրեմն նրանք միշտ պաշտպան են կանգնել հայ բանաւորների շահերին և այլն, և այլն։ Եւ այս բանը նրանք յայտարարում են ամեն քայլափոխում, թէ ժողովների մէջ, թէ ագիտացիայի ժամանակ և թէ մամուլի մէջ։ Օրինակ՝ Դաշնակցութիւնը իր մի "թէօրիտիկոսի„ բերանով յայտարարում է՝ որ "Հ. Յ. Դաշնակցութիւնը 12 տարի սրանից առաջ մտցրել է իր ծրագրում ազգային անկախութեան պահանջի հետ միասին՝ սոցիալիզմի գաղափարը, որ և արծարծել է նա տարիների ընթացքում՝ իր հրատարակութիւնների մէջ„։ (Հայրենիքի Գաղափարը, երես 88)։ Իսկ Հնչակեան Կուսակցութիւնը էլ հանգիստ չէ տալիս. "Հնչակը իր սոցիալիստական քարոզներով, Հնչակեան Կուսակցութիւնը իր սոցիալիստական ծրագրով և գործունէութեամբ տասն և վեց տարի շարունակ հայ գիւղացու, հայ բանւորի, հայ հարստահարուածի շահն է պաշտպանել... "և նրա աշ-

խատութիւնները պարապ չեն մնացել, սոցիալիզմը հայ կեանքում մտել է իր պատմական դերի մէջ„ (Վերածնութիւն N° 44)։ և, վերջապէս, նա իր հեռագրի մէջ Ամստերդամի միջազգային սոցիալիստական կոնգրէսին՝ ինքզինքն յորջորջում է նոյնիսկ "Նաև Ռուսաստանում գործող սոցիալ-դեմոկրատական հնչակեան յեղ. կուս.„ և այլն։ Այս բոլորից յետոյ մարդ միայն կարող է շըւարած հարցնել. "Եթէ այդ կուսակցութիւններն իրօք որ 15 տարուց ի վեր սոցիալիստական են եղել, ուրեմն հայ բանւորութեան մէջ այժմ գիտակից բանւոր-սոցիալիստները մի ստւար թիւ պիտի կազմէին„։ Բայց ղըժբաղդաբար դա միայն երազ է, իրողութիւնն այն է, որ մինչև վերջերս Կովկասում հայ բանւորների մէջ սոցիալիստական շարժումը համեմատաբար աւելի թոյլ էր քան միւս ազգութիւնների բանւորների մէջ, թէև սրանց մէջ աւելի ուշ էին հրապարակ եկել յեղափոխական կազմակերպութիւններ։ Բայց չը հեռանանք բուն խնդրից։

Այդ երկու կուսակցութիւնների Կովկասում սոցիալիստի դիմակի տակ հրապարակ գալը, անշուշտ պիտի զարմանք պատճառէ և քմծիծաղ առաջ բերէ Կովկասահայ պրոլետարիատի այն գիտակցող փոքրամասնութեան մէջ, որը քաջ ծանօթ լինելով այդ կուսակցութիւնների նախկին բացասական և նոյնիսկ թշնամական վերաբերմունքին դէպի Կովկասահայ բանւորական շարժումը, — արհամարանքով պիտի վերաբերի դէպի նրանց այդ նոր խաղը և ըմբռնէ նրանց իսկական միտումները, — այսինքն ներկայ պայմանների մէջ օգտուել Կովկասահայ պրոլետարիատից, որպէս յեղափոխական մի կարևոր ոյժից։ Բայց բոլորովին այլ հետևանքի կարող է հասնել այդ բանը Կովկասահայ պրոլետարիատի դեռ անգիտակից մասսայի մէջ, որը դեռ անկարող է քննադատաբար վերաբերուել դէպի այդ կուսակցութիւնները։ Հայ պրոլետարիատի այդ մասը իրեն դէմ առ դէմ տեսնելով "սոցիալիստ„ կոչուող երկու յեղափոխական կուսակցութիւն-

ներ — Հնչակեան, Դաշնակցական և Սոցիալ-Դեմոկրատիան, պիտի շարած հարցնէ իրեն. "Ինչո՞ւմն է կայանում դրանց տարբերութիւնը, եթէ դրանք բոլորն էլ «սոցիալիստ»ներ և յեղափոխականներ են, ինչի՞ համար դրանք կռիւ են մղում միմեանց դէմ, եթէ նրանք ղեկավարում են մի իդէալով և, վերջապէս ինչի՞ հայ սոցիալ-դեմոկրատները անուանում են Հնչակեաններին և Դաշնակցականներին նացիոնալիստներ, երբ վերջիններս նոյնպէս «սոցիալիստ» են կոչում իրենց„: Հասկանալի է, որ այս հանգամանքը պիտի առաջ բերէ հայ պրոլետարիատի մէջ մտքերի խառնաշփոթութիւն, և նոյնիսկ յուսախափութիւն ու վհատութիւն, ինչոր արդէն տեղի է ունենում:

Այս բոլորը, կրկնում ենք, աւելի ևս պիտի դրդեն հայ բանւորներին ծանօթանալ մեր ազգայնական կուսակցութիւնների հետ ոլքան կարելի է մօտիկից և հէնց այդ ծանօթութեան համաձայն էլ ստուգել թէ ոլքան ուղիղ է նրանց պնդումները և բղխո՞ւմ են արդեօք դրանք այդ կուսակցութիւնների «սոցիալիստ» բնաւորութիւնից, թէ նպատակ ունեն շլացնել բանւորներին և օգտուել նրանց յեղափոխական տրամադրութիւնից:

Բայց դա դեռ բաւական չէ. հայ պրոլետարիատը պէտք է ունենայ իր սեփական աշխարհայեացքը, որպէսզի հակադրէ այդ վերոյիշեալ կուսակցութիւնների ծրագրին ու գործունէութեան և դրա հիման վրայ էլ կարողանայ որոշել իր յարաբերութիւնները դէպի այդ կուսակցութիւնները:

Իսկ հայ պրոլետարիատի աշխարհայեացքը կարող է լինել միայն դասակարգային, ինչպէս որ է համայն աշխարհի պրոլետարիատինը, որն իր կողմից մարմնացել է սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքների մէջ: Այդ աշխարհայեացքի էութիւնը կայանում է նրանում, 1) որ իւրաքանչիւր ազգի մէջ պրոլետարիատը կազմում է առանձին դասակարգ, որի շահերը և ձգտումները հա-

կառակ են նոյն ազգի բուրժուական տարրերի և դասակարգերի շահերին. 2) որ իւրաքանչիւր կուսակցութիւն, որ անուանում է ինքզինքն սոցիալիստական և հրապարակ է գալիս բանւոր դասակարգի անունով, պէտք է մինչև վերջը հետևողական լինի և չը դրժէ պրոլետարիատի դասակարգային շահերին և սոցիալիզմի սկզբունքներին. 3) որ այդպիսի կուսակցութիւնը պէտք է թէ իր ծրագիրը, թէ գործունէութիւնը և այլն հիմնէ դասակարգային կռիւի հողի վրայ և լինի միայն արտայայտող պրոլետարիատի ձգտումներին: Իսկ եթէ մի կուսակցութեան ծրագիրը և գործունէութիւնը չեն համապատասխանում վերոյիշեալ կէտերին. նա, նշանակում է, թշնամի է պրոլետարիատին և վնասում է նրան, ինչ անուն էլ նա կրելիս լինի:

Ուրեմն, այս մասնաբով, այսինքն պրոլետարիատի շահերի տեսակէտից պէտք է ձեռնարկել վերոյիշեալ կուսակցութիւնների քննադատութեան և իմանալ թէ ոլքան նրանք համապատասխանել են վերոյիշեալ կէտերին:

Ուստի անհրաժեշտ է դառնում մի ակնարկ գցել այդ կուսակցութիւնների ծագման, անցեալի, ծրագրի, գործունէութեան, նրանց ոլ դասակարգի շահերի պաշտպան լինելուն և վերջապէս այն ձգտումների վրայ, որոնցով մինչև վերջերս նրանք ղեկավարուել են: Բայց հայ բանւորներից շատ-շատերը ոչ ժամանակ, ոչ էլ յարմարութիւններ ունեն ձեռք բերել այդ կուսակցութիւնների հրատարակութիւնները և մանուլը, որպէսզի ուսումնասիրեն նրանց: Մեր այս գրուածքը նպատակ ունի որոշ չափով լրացնել այդ պակասը: Այս գլխոյկի մէջ մենք խօսելու ենք միայն Հնչակեան կուսակցութեան մասին, որովհետև Դաշնակցութեան մասին մեր մամուլի մէջ*) բաւական խօսուած է և ապագայում անշուշտ էլի խօսուելու է:

---

*) Տես «Սոցիալիստ»ի համարները:

Սակայն, վերոյիշեալ նպատակով սկսելով գրել մեր այս գրքոյկը մենք ակամայ յիշում ենք երգիծաբան Պարոնեանի "Ազգային ջոջերը„: Այնտեղ Պարոնեանը՝ խօսելով Տիգրան Եուսուֆեանի և Ապրօ Էֆէնդիի մասին, — որոնցից առաջինի հասակը խիստ կարճ էր, "լակոնական„, ինչպէս ասում է Պարոնեանը, իսկ վերջինինը, ընդհակառակը, շատ երկար էր, և որոնցից մէկը Կ. Պոլսի Հայոց Ազգային Քաղաքական Ժողովի նախագահն, իսկ միւսը քարտուղարն էր — անում է՝ իրեն յատուկ սրամտութեամբ, մի այսպիսի անմման բաղդատութիւն. "եթէ այս երկու մարդերու կարծիքներն այնպէս են ինչպէս իրենց հասակները, ժողովը մեծ դժուարութիւն պիտի քաշէ որոշում մը տալու համար„: Նոյն տեսակ դժուարութեան առաջ ենք գտնւում նաև մենք, մտադրւելով՝ Հնչակեան մամուլի և գործունէութեան հիման վրայ, մի որոշում կայացնել՝ այդ կուսակցութեան խարաքտերիստիկը տալու համար: Մեզ դժուարացնում է այդ կուսակցութեան սկզբունքների, մամուլի և գործունէութեան մէջ տիրող այն քաոսը, խառնաշփոթութիւնը և անվերջ հակասութիւնները, որոնք իրար հանդէպ կանգնած են ճիշտ այնպէս, ինչպէս Եուսուֆեանի և Ապրօ Էֆէնդիի հասակները: Հնչակեան Կուսակցութիւնը ունի վերին աստիճանի տարօրինակ և ինքնատեսակ մեթոդ՝ իր թէօրիական և տաքտիկական աշխարհայեացքը բացատրելու: Այնտեղ մետաֆիզիքան ու դիալէքտիկան, իդէալիզմը ու մատերիալիզմը, նացիոնալիզմը ու սոցիալիզմը կարողանում են պարակւել մի հարկի տակ և հաշտեցւում են միմեանց հետ:

Թողնում ենք ընթերցողներին՝ երևակայել այն մարդու դրութիւնը, որն այսպիսի պարագաների մէջ յանձն է առնում խօսել Հնչակեան Կուսակցութեան մասին, մի դրութիւն, որից դուրս գալու համար պէտք է գրել 5-10 յօդուածներ կամ գրքեր, որպէսզի դրանցից մէկում խօսել Հնչակեան մետաֆիզիքայի, միւսում նրա նացիոնա-

լիզմի, երրորդում նրա կարծեցեալ սոցիալիզմի մասին և այլն: Այսպիսի մի աշխատանք կատարելու մենք ոչ ժամանակ, ոչ ցանկութիւն և ոչ էլ համբերութիւն ունենք. այդ բանը մենք թողնում ենք նրանց, որոնք մի այդպիսի աշխատանք կատարելու յարմարութիւններն ունեն: Իսկ մենք կը խնդրէինք մեր ընթերցողներին՝ համբերող լինել և համաձայնւել մեզ հետ մի փոքրիկ զբոսանք կատարել Հնչակեան մամուլի այդեստանների մէջ՝ ծանօթանալու նրա "սոցիալիստական„ մտքերի գունաւոր ծաղիկների հետ: Թող ներեն մեզ ընթերցողները, եթէ մենք անենք երբեմն երկար, ձանձրալի և կրկնութիւններով լի քաղուածքներ: Այս բանն անհրաժեշտ է նախ նրա համար, որպէսզի մենք կարողանանք թէ մենք դիտմամբ առանձին-առանձին այսպիսի նախադասութիւններ ենք մէջ բերում, որոնք Հնչակեան կուսակցութեան ուղղութիւնը գծագրում չեն գծագրում: Երկրորդ՝ որպէսզի վերականգնել մի քանի Հնչակեանների յիշողութեան մէջ այն բոլորը, ինչը նրանք մի ժամանակ գրել կամ գործել են և ինչը այսօր կամովին մոռանալով, նոյն բանը վերագրում են ուրիշ կուսակցութիւններին:

Հնչակեանները բաց չեն թողնում ոչ մի առիթ, որպէսզի ցոյց տան, որ նրանց կուսակցութիւնն է եղել, որ "առաջին անգամ Հայերիս մէջ մտցրել է սոցիալիստական գաղափարներ„ որ և "քարոզել է 15-16 տարիներ„. որ շնորհիւ նրանց է, որ կովկասահայ բանւորները ինքնագիտակցութեան են հասել, նրանց "գործն է, որ խորին արմատներն ունի հէնց այն ռուսահայ պրոլետարիատի քաղաքական ու յեղափոխական կրթութեան և ինքնագործունէութեան մէջ, որն այսօր իր շարժումներով, միացած միւս ազգերի պրոլետարիատի հետ, մեծ նշաններ է ցոյց տալիս նաև իր դասակարգային ինքնագիտակցութեան և անցնում է դասակարգային կռիւ բուն ասպարէզը՝ (տես «Վերածնութիւն» N° 32): Եւ

այս բանը նրանք այնքան ուղիղ են գտնում, որ Կովկասի մասին խոսք եղած ժամանակը "Հպարտութիւն են զգում„։

Տեսնենք ո՞րքան դա ուղիղ է։ Տեսնենք ի՞նչպիսի "սոցիալիզմ„ է մտցրել Հայերիս մէջ "առաջին անգամ„ Հնչակեան կուսակցութիւնը և ապա յաջորդ գլուխներում կը տեսնենք թէ ի՞նչպէս է "կրթել„, դաստիարակել Հայ պրոլետարիատ դասակարգին առհասարակ, իսկ Կովկասահայ բանուորներին մասնաւորապէս։

I.

ՀՆՉԱԿԵԱՆ "ՍՈՑԻԱԼԻԶՄԸ„

Մի կողմ թողած այն մի քանի թարգմանութիւնները, որոնց Հնչակեանների ձեռքով կատարուած լինելը՝ դեռ չէ ցոյց տալիս, որ Հնչակեանները իսկական սոցիալ-դեմոկրատներ են, ինչպէս որ ոչ ոք, բառիս բուն նշանակութեամբ, չէ համարում մարքսիստներ, սոցիալ-դեմոկրատներ երևելի անիշխանական Բակունինին՝ իր "Կոմունիստական Մանիֆէստի„ ռուսերէն թարգմանութեան, կամ մեր Դաշնակցականներին՝ նրանց "Գիտական Սոցիալիզմի„ հայերէն թարգմանութեան համար։ Մի կողմ թողած նաև Հնչակեան ծրագրի այն կէտերն, որոնք բառացի կերպով և երբեմն խիստ անյաջող վերցրած են Եւրոպայի, առանձնապէս Ռուսաստանի սոցիալիստական գրականութիւնից և որոնք, ի դէպ ասել, ծրագրի մէջ միմիայն զարդարանքի դեր են խաղացել. մենք մի ակնարկ գցենք այն յօդուածների, գրքերի, մասուլի և ծրագրի այն կէտերի վրայ, որոնք Հնչակեան կուսակցութեան մտքերի արդասիքը լինելու պատիւն են ունեցել և որոնք յարմարեցրած են եղել իբր թէ հայկական իրականութեան։

Սկսենք "Նոր Հոսանք„ գրքոյկից, որը լոյս է տեսել 1889-ին և արտատպուած է "Հնչակ„-ից։

"Ուշք խրել Եւրոպական ժողովուրդների ներկայ թշուառութիւնների առջև, որ առաջացրել է կապիտալիզմը, — մեզ ներելի չէ։ Ուշակցել այդ կապիտալիզմի մուտք գործելուն մեր ժողովուրդի մէջ, քանի որ Եւրոպական ժողովուրդների առաջադէմ գործիչները տեսնելով ու ապացուցանելով նրա, կապիտալիզմի, բոլոր մեծամեծ չարիքները, աշխատում ու գործում են այսօր կործանել նրա անիրաւ բէժիմի կարգերը՝ յանուն սոցիալիզմի, — աշակցել, ասում եմ, կապիտալիզմի մուտք գործելուն մեր ժողովրդի մէջ, — յանցանք է„*)։ ("Նոր Հոսանք„, էջ 10)։

"Մենք նոյնպէս տեսանք, որ Հայ ժողովուրդի մէջ արդէն նշմարւում են նշոյլները տնտեսական մի նոր ֆազիսի, որ, եթէ առաջը չառնեն նպատակայարմար միջոցներով,*) վաղ թէ ուշ երևան կգայ կատարելապէս և վերջ ի վերջոյ թէ ներքին և թէ արտաքին ազդեցութիւնից առաջ կը բերէ տնտեսական հարստութեան կապիտալիզացիա, արդիւնագործութեան այն սիստէմը, որ պտուղն է կապիտալիզմի։ (Նոյն տեղը, էջ 14)։

"Մեր, սոցիալիստներիս, գլխաւոր հոգսերից մէկն է, նախազգուշացնել Հայ ժողովրդին կապիտալիզմի ախտերից, առաջն առնել Հայաստանում այդ ախտերի մուտք գործելուն, որ ստեղծելով երկրում հազարաւոր, միլիոնաւոր բանուոր-աղքատներ, պրոլետարիատ դասակարգ, կյանձնեն դրանց ընչին փոքրամասնութիւն կազմող առանձնաշնորհված, կապիտալիստ դասակարգի անզուսպ կամայականութեան, կդարձնեն դրան մահու ճիրանների զոհ, որի ոսկորներից կազմած ահագին արիւնաթաթախ աշտարակի վրայ կծածանվէ կապիտալիզմի անսիծված դրոշակը*)։ (Նոյն տեղը, էջ 23)

"Եթէ թիւրքահայն իր հողով դառնայ պատառ մէկ ուրիշ բռնապետութեան՝ նրա ներկայ աղէխարշ դրութիւնը կշարունակվէ նոյն եղանակով գոյութիւն ունե-

*) Կուրսիվը մերն է։

նալ, նետելով նրան մի շարք նորանոր չարչարանքների ու թշուառութիւնների գրկում, կատարելապէս անիրաւ գործված թողնելով նրա ներկայ ազատական ու բարեկեցութեան հասնելու ձգտումները, վիճակելով նրան մնել նոր պատերազմ ընդդէմ բռնութեան իր մարդկային գոյութեան ու առաջադիմութեան համար։ Եթէ դառնայ թիւրքահայը զոհ որ եւ է եւրոպական էքսպլոատատոր տէրութեան, նա առաջնապէս կ՚յայտնվի տնտեսակախապէս ճորտ եւ երկրում կապիտալիզմի առաւել ու առաւել աճման համեմատ,— որին ամենայն ջանքերով կնպաստէ էքսպլոատատոր տէրութիւնը՝ դրանում լինելով նրա գլխաւոր դժն ու նշանաբանը,—կստեղծվեն թիւրքահայ ժողովրդից պրոլետարիատի բազմաթիւ լեգէոններ իրենց բոլոր ազէաներով ու անիրաւութիւններով հանդերձ„*)։ (Նոյն տեղը, էջ 39)։

"Հայ ժողովուրդը վաղ թէ ուշ կարող է հասնել այն անիրաւ տնտեսական դրութեան (այսինքն կապիտալիզմի), որ այսօր Եւրոպայում թագաւորում է։ Բայց հայ ժողովրդին նպատակայարմար միջոցներով կարելի է նախազգուշացնել այն թշուառ պէրսպէկտիվից։ Պիտի հասարակութեան գիտակցական մասը կանխապէս ջանք ու հարկաւոր միջոցներ գործ դնէ այս գալիք թշուառութիւնների առաջն առնելու„*)։ (Նոյն տեղը, էջ 8)։

"...սոցիալիզմը իր իրականացման համար ունի և ուրիշ դրական հիմք հայ ժողովրդի մէջ։ Այսինի է հայ գիւղական-համայնական, կոմմունական կարգերը, հողատիրութեան կոմմունական կերպերը։ Հին ժամանակից ժառանգած այդ մեծ հարստութիւնը՝ գիւղական համայնքը կարող է ապագայում դեր խաղալ հայ ժողովուրդի բարօրութեան գործում, ստանալով իր այժմեան ձև ու կարգերից անհամեմատ լայն, անհամեմատ կատարելագործված կերպարանք„։ (Նոյն տեղը, էջ 12)։

Ահա ինչ տեսակ սոցիալիզմ է մտցրել մեր մէջ Հնչակեան կուսակցութիւնը։ Սոցիալիզմ առանց կապիտալիզմի, առանց պրոլետարիատ դասակարգի, այսինքն

*) Կուրսիվը մերն է։

սոցիալիզմ առանց սոցիալիստական կարգեր ստեղծելու անհրաժեշտ պայմանների և առանց այդ սոցիալիստական կարգերի համար կուռող պրոլետարիատ դասակարգի*)։ Այսպիսի սոցիալիզմի պաշտպանը կարող է լինել միայն մանր բուրժուական մի կուսակցութիւն, և Հնչակեան կուսակցութիւնը, հէնց իր գոյութեան առաջին օրից, իրենից ներկայացրել է մի այդպիսի կուսակցութիւն։ Մենակ մանր-բուրժուազիան է, որ սարսափում է կապիտալիզմից, ինչպիս մի հրէշից, որը նրան կուլ է տալու, մանր-բուրժուազիան է, որ սոսկում է պրոլետարիատի գոյութիւնից, որի շարքերում վաղ թէ ուշ ինքը պիտի առնէ իր վերջին շունչը։ Մեր խօսքերի պարզաբանութեան համար աւելորդ չէր լինի այստեղ առաջ բերել "Կոմմունիստական Մանիֆէստ„ի այն կտորը, որտեղ խօսւում է մանր-բուրժուական սոցիալիզմի մասին**)։

*) Հնչակեան այս խայտապղէտ սոցիալիզմը կազմւած է XIX-րդ դարի սկզբներում յայտնի սոցիալիստ-ուտոպիստների թէորիայի հիման վրայ, իսկ գլխաւորապէս առնւած է ռուս նարոդնիկներից և սուբեկտիվիստներից, որոնց դէմ այնպիսի յամառ կռիւ էին մղում մի ժամանակ բոլոր ռուս մարքսիստները և սոցիալ-դեմոկրատները։

**) Յիշեցնում ենք ընթերցողներին, որ Տաճկահայաստանում 80-ական թւականներին, այսինքն Հնչակեան կուսակցութեան հիմնելու ժամանակները, և նոյնիսկ այժմ, հայ ժողովրդի ջախջախիչ մեծամասնութիւնը կազմում էին գիւղացիները և արհեստաւորները, այսինքն մանր-սեփականատէրերը, մանր-բուրժուազիան, իսկ բանւոր դասակարգը կազմում էր դեռ չնչին գումար՝ մեծ թւով գործարանների բացակայութեան պատճառով։ Հաւանականաբար այդ երևոյթով էլ պէտք է բացատրել Հնչակեան կուսակցութեան (նոյնպէս Դաշնակցութեան) զուտ մանր-բուրժուական բնաւորութիւնը։

"Այդ սոցիալիզմի պահանջների դրական կողմը կայանում է նրանում, որ նա ձգտում է կամ վերահաստատել արդիւնագործութեան և հաղորդակցութեան հին միջոցները և նրանց հետ միասին հին սեփականատիրութեան պայմանները և հին հասարակութիւնը. կամ թէ նա ձգտում է զօռով սեղմել արդիւնագործական եւ հաղորդակցութեան ներկայ միջոցները հին սեփականատիրական յարաբերութիւնների սահմանների մէջ, որոնք նրանցից խորտակւած էին եւ պէտք է խորտակւէին: Երկու դէպքերում էլ նա յետադիմական եւ ուտոպիստական է*): (Կ. Մարքս և Ֆ. Էնգելս "Կոմմ. Մանիֆէստ„ի հայերէն թարգմ. 1904 թ. էջ 58):

Եւ Հնչակեան Կուսակցութիւնը բոլորովին հաւատարիմ իր մանր-բուրժուական, ինքնատեսակ և տարօրինակ 'սոցիալիզմ„ին և ձեռքում ունենալով իր "սոցիալիստական„ ծրագիրը՝ սկսում է իր "սոցիալիստական„ գործունէութիւնը Տաճկաստանում ահա թէ ինչ պատճառներից դրդւած.

"Նկատելով, որ Հայութեան ամենաստւար մեծամասնութիւնը կազմում են թիւրքահայերը և նրանց բնակավայրը մեր Հայրենի հողի ամենամեծ տարածութիւնն է.

"Նկատելով, որ Հայութեան այդ մեծամասնութեան դատը*) Բերլինի Դաշնագրութեան 61-րդ յօդւածի և այլն.:.

"Այդ բոլոր նկատումների հիման վրայ պատմական առաջնակարգ անհրաժեշտութիւն է — 1) Որ Հայ յեղափոխական գործունէութիւնն այսօր բացառապէս նւիրւէ թիւրքահայ ժողովրդային դատի պաշտպանութեան ու լուծման համաձայն մօտակայ նպատակի„**): (Ծրագիր Հնչակ. Կուս. երրորդ հրատարակութիւն, 1897 թ. էջ 8-9):

Ուրեմն, այժմ մենք՝ հիմնւած վերոյիշեալ ցիտատների վրայ, վստահաբար կարող ենք ասել, որ Հնչակեան այս մանր-բուրժուական սոցիալիզմը, աւելի ճիշտը, նացիոնալիզմը, այնքան հեռու է բուն պրոլետարական սոցիալիզմից — այն սոցիալիզմից, որը Մարքսի և Էնգելսի

*) Կուրսիվը մերն է: **) Կուրսիվը բնագրում է:

գիտական աշխատութիւնների և ուսումնասիրութիւնների շնորհիւ զտւեց ուտոպիստական մեայլից, հիմնւեց հասարակութեան զանազան դասակարգերի տնտեսական-քաղաքական իրական յարաբերութիւնների գիտական լուսաբանութեան վրայ, որի համար և ստացաւ "Գիտական Սոցիալիզմ„ անունը և դարձաւ յամայն պրոլետարիատի ղեկավարող գաղափարը, — որքան երկինքը երկրից: Պրոլետարական, կամ այլ խօսքով, գիտական սոցիալիզմի հիմքը կազմում է դասակարգային կռիւը, որը ընդունում է ամենաստւր կերպարանք միայն կապիտալիստական արդիւնաբերութեան ժամանակ, երբ հասարակութիւնը բաժանւելով երկու՝ տնտեսական ու քաղաքական-շահերով միմեանց հակառակ մասերի — պրոլետարիատի և բուրժուազիայի, նրանց միջև անտագոնիզմը հասնում է իր գագատնակէտին, որը դառնում է դրդիչը պրոլետարիատին՝ մղելու իր դասակարգային յամառ կռիւը բուրժուազիայի դէմ, յանուն սոցիալիստական կարգերի: Հնչակեան Կուսակցութիւնը չենական պատնէշներ դնելով կապիտալիզմի Հայաստան մուտք գործելուն դէմ, դրանով հակառակորդ էր հանդիսանում տնտեսական .ենքի բնական զարգացման և ուրեմն յետադիմական դեր էր կատարում:

Այս բոլորի հիման վրայ, երբ հայ սոցիալ-դեմոկրատները քննադատում էին Հնչակեան Կուսակցութիւնը և արդարացի կերպով ցոյց էին տալիս նրան, որ հակառակ իր հաւակնութիւններին, նա երբէք չի եղել և չէր էլ կարող լինել սոցիալիստական կուսակցութիւն և չէ ունեցել սոցիալիստական գործունէութիւն, դրա դէմ "Վերածնութիւն„ը հետևեալ խորիմաստ դիտողութիւններով պատասխանեց, որը, մեր կարծիքով, արժանի է մեծ ուշադրութեան. 'որոհետև գործնականի *) մէջ քաղաքական-սոցիալիստական ագիտացիայի և պրո-

*) Կուրսիվը բնագրի մէջ է:

լետարիատի դասակարգային կազմակերպութեան ու կուի համար տակաւին հասուն հող չը կար„**)։ Ամբան միամիտ պատասխան։ Բայց ի՞նչպէս կարող էր Հնչակեան կուսակցութիւնը 'քաղաքական-սոցիալիստական ագիտացիա, ունենալ, երբ դրա արմատի՝ կապիտալիզմի, Հայաստանում մուտք գործելու դէմ պատերազմ էր յայտարարել նա։ Ի՞նչպէս կարող էր "պրոլետարիատի դասակարգային կազմակերպութիւն և կռիւ„ ունենալ, երբ Հնչակեան կուսակցութիւնը այդ դասակարգի Ցաճկաձոր Հայաստանում հրապարակ գալը համարում էր մեծ դժբաղդութիւն և "նախազգուշացնում„ էր հայերին այդ "չարիք„ից։ Ի՞նչպէս կարող էր սոցիալիստական գործունէութիւն լինել, երբ Հնչակեան կուսակցութիւնը իր գործունէութիւնը չէր սկսում այնտեղ, ուր պրոլետարիատ գոյութիւն ունէր, այլ այնտեղ, որտեղ կար "Հայրենի հողի մեծ տարածութիւն և հայութեան մեծամասնութիւնը„, այսինքն ոչ թէ հայ պրոլետարիատի դասակարգային շահերից դրդուած, այլ նացիոնալիստական-բուրժուական ձգտումներով ղեկավարուելով։ Վերջապէս, ի՞նչպէս կարող էր այս բոլորը լինել, երբ Հնչակեան կուսակցութիւնը մի ինչոր "հասարակական գիտակցական մասի„ միջոցով և "նպատակայարմար միջոցներով„ ուզում էր Հայաստանի կիսանահապետական գրութիւնից մի ոստիւնով սոցիալիստական կարգերը ցատկել՝ կապիտալիզմի վրայով։

Ահա այս է Հնչակեան 'սոցիալիզմի„ ամբողջ թէորիան, և նրա ծառայութիւնը (իմացիր չարիքը) այն եղաւ, որ այսօր ամբողջ Հնչակեան կուսակցութեան անդամների մէջ չէր գտնի մէկը, որի գլխի մէջ սոցիալիզմի մասին մի պարզ հասկացողութիւն լինի, բառիս եւրոպական իմաստով ասած։ Եւ Հնորհիւ այդ թէորիայի է, որ մինչև վերջերս Հնչակեան կուսակցութեան ազդեցութեան

**) Տես Վերածնութիւն, N 32 «Բացատրենք»։

տակ գտնուող բանւորների մէջ արմատացել են սոցիալիզմի մասին այնպիսի սխալ և հակասական հայեացքներ, որոնց արմատախիլ անելու համար հայ սոցիալ-դեմոկրատները քիչ աշխատանք չեն վատնել և երևի դեռ մեծ խոչնդոտների են հանդիպելու նրանք այդ ասպարէզում։

Այսքանը բաւ համարելով Հնչակեան "սոցիալիզմի„ մասին, անցնենք այժմ նրա "սոցիալիստական„ գործունէութեան և հայ պրոլետարիատին "կրթելու„ ու դաստիարակելու մեթոդին։

II.

ԻՆՉՊԷՍ Է ԿՐԹԵԼ, ՀՆՉԱԿ. ԿՈՒՄԱԿՑ. ՀԱՅ ԲԱՆԻՈՐՆԵՐԻՆ

Մենք տեսանք, որ Հնչակեան կուսակցութիւնը բացառապէս Ցաճկաստանում գործելու նպատակ ունենալով հանդերձ, այնտեղ սոցիալիստական գործունէութիւն չէ ունեցել, որովհետև "սոցիալիստական-քաղաքական ագիտացիայի և պրոլետարիատի դասակարգային կուսի հող չը կար„։ Ենթադրենք, որ Ցաճկաստանում հող չը կար, միթէ Կովկասում էլ հող չը կար։ Եթէ Հնչակեաններն հետևողական լինէին, մեզ պիտի պատասխանէին, որ նրանց գործունէութիւնը սահմանափակւում էր միմիայն Ցաճկաստանով, ուրեմն Կովկասում ոչ մի գործունէութիւն չէին կարող ունենալ։ Եւ մենք կը բաւականայինք դրանով։ Բայց Հնչակեան կուսակցութիւնը ըստ իր սովորութեան, այս հարցումն էլ առաջ է բերել մտքերի քաոս։ Առհասարակ դժուար է վճռել թէ Հնչակեան ո՞ր հայեացքի վրայ կանգ առնել։ Երբ ցոյց էք տալիս նրանց, որ Կովկասահայ բանւորների մէջ նրանք ոչ մի սոցիալիստական գործունէութիւն չեն ունեցել, նրանք պատասխանում են. "որովհետև Կովկասում բանւոր դասակարգը գտնւում էր սաղմային դրութեան մէջ և գոյու-

28057-62

թիւն չունէին բանուորական այն լայն շարժումները, որոնք վերջերս միայն հրապարակ են եկել„: Իսկ երբ խօսք է լինում Կովկասի բանուորների քաջարի կռիւ և դասակարգային համերաշխութեան մասին, Հնչակեանները դուրս են պրծնում և կոչում են, որ այդ Հնչակեան կուսակցութեան քարոզած "սոցիալիստական իդէալների„ տարածման տակ է բարգաւաճել ու բեղմնաւորուել: Մենք իսկայն կը տեսնենք, որ այդ երկու կարծիքներն էլ ոչ մի քննադատութեան չեն դիմանում: Նրանք միայն սոփեստական պատասխաններ են: Ապացուցանենք այդ դարձեալ քաղուածքներ մէջ բերելով: "Հնչակ„ի 1901 թ. Nº 4-ի մէջ տպուեց մի թղթակցութիւն՝ "Բանուորական շարժումները Կովկասում„ վերնագրով, որտեղ մի պատմական ակնարկ է գցուած այդ շարժումների վրայ: Այդ տեղից մենք իմանում ենք նախ՝ որ "պաշտօնական տեղեկութեան համեմատ Անդրկովկասը դեռ 1893-ին ունէր ցուցակագրած 22.030 բանուորներ, իսկ 1896-ին 55.668, այդտեղից պարզ է, որ 3 տարուայ ընթացքում բանուորների թիւը կրկնապատկուել էր, կազմելով ամբողջ աղգաբնակութեան 6 % ...”*):

"Թիֆլիսը, որ Կովկասի սիրտն է, թէև արդիւնաբերական առաջնակարգ կեդրոն չէ, միւս քաղաքների հետ համեմատելով, բայց նա ևս պերճախօս թիւեր է տալիս: 1896-ին նա ունէր 254 գործարան, 4561 բանուորներով, իսկ 1900-ին գործարանների թիւն հասնում է 413-ի, բանուորներինը 13.764-ի„:

Երկրորդ՝ "բանուորական մասնակի գործադուլները գործարաններում և երկաթուղու արհեստանոցներում

*) Պէտք է ի նկատի ունենալ, որ այս թիւերը դեռ լրիւ չեն և որ այս միայն գործարանական բանուորների թիւն է: Այստեղ յիշած չեն գիւղական բանուորները և կէս-պրոլետարիատ գիւղացիներն ու արհեստաւորները, որոնց թիւը նոյնպէս բաւական մեծ է: Դան. Հեղ.

վաղուց ի վեր ընդհանուր են դարձած: Պարտական այս ոյժը յայտնի կերպով երևան եկաւ դեռ 1897-ին„:

Ի՞նչ են ցոյց տալիս այս ցիտատները: Այն, որ Հընչակեանները անխիղճ կերպով կեղծում են, երբ ասում են, որ մինչև վերջերս Կովկասում բանուորական շարժման և սոցիալիստական ագիտացիայի հող չը կար: Մեր առաջ բերած թուանշանները ցոյց են տալիս, որ դեռ 1893 թ. Կովկասում գոյութիւն ունէին բաւականաչափ բանուորներ, իսկ 1896-ին նրանց թիւը արդէն կրկնապատկուում է և 1897-ից սկսում են բանուորական պարբերական շարժումները: Իսկ ի՞նչ էր անում այդ ժամանակ Հընչակեան կուսակցութիւնը, որը Կովկասի մի քանի քաղաքներում ունէր իր կազմակերպութիւնները և խմբերը, որոնց կազմակերպում էր միմիայն նպատակ ունենալով օգտուել նրանց նիւթական միջոցներից և արիւնից՝ Տաճկաստանի մէջ հայկական անկախութիւն՝ "Հայրենի հողի մեծ տարածութիւնը„ ձեռք բերելու համար: Արդեօք Հնչակեանները չէին կամենայ ցոյց տալ մի թուղթիկ ուղղուած կովկասահայ բանուորներին, կամ մատնացոյց անել մի գործադուլ, որ նրանք ղեկավարելիս լինէին, կամ մի քաղաքական-բանուորական ցոյց և այլն: Գոնէ մենք այդ բանը երբէք չենք տեսել: Ուրեմն, ծագում է հարց. ինչպէս է Հնչակեան կուսակցութիւնը դաստիարակել մեզ, պրոլետարներս, որի մասին այժմ այդքան յաճախ յիշեցնում են և թմբուկ զարնում: Գուցէ մամուլով, սոցիալիստական հրատարակութիւններով: Տեսնենք: 1894-ին վերջանում է Հնչակեան, այսպէս ասած, "սոցիալիստական„ հրատարակութիւնների դարեշրջանը և այդ թուականից սկսեալ՝ 1895, 96, 97, 98, 99, 900, 901, 902 տարիներում "Հնչակ„ի մէջ սոցիալիզմի հոտն էլ չը կայ և ոչ մի նոր հրատարակութիւն լոյս չէ տեսել, եթէ չը հաշուենք "Հնչակ„ի մէջ երբեմն տպուած պատահական յօդուածները կամ թղթակցութիւնները եւրոպական սոցիալիստական շարժման մասին: Նշանակում

է, մի կողմից աստիճանաբար բազմանում էր Կովկասում բանուորների թիւը, ընդարձակւում և ծաւալ ստանում բանուորական և սոցիալիստական շարժումները, միւս կողմից Հնչակեան "սոցիալիստ„ կուսակցութիւնը լուսեամբ միայն դաստիարակում էր հայ պրոլետարիատին, եթէ ի նկատի չառնենք այդ կուսակցութեան մէջ այդ տարիների ընթացքում տեղի ունեցած մի շարք տմարդի և կեղտոտ դէպքերը, որոնք միայն կարող էին անբարոյականացնել հայ պրոլետարիատին և ոչ դաստիարակել։ Բայց մենք բոլորովին իրաւացի չենք, երբ ասում ենք, թէ Հնչակեան կուսակցութիւնը չէ դաստիարակել հայ պրոլետարիատին։ Դա քարոզել է այնպիսի մտքեր, ինչպէս վարը պիտի տեսնենք, որոնք կարող էին իսկապէս "կրթել„ պրոլետարիատին, բայց ոչ սոցիալիստական սկզբունքներով, այլ զուտ նացիոնալիստական և յետադիմական, որն արթնացող հայ պրոլետարիատին միայն կարող էր խանգարել՝ արագ իւրացնելու սոցիալիզմի սկզբունքները և կանգնելու դասակարգային կռւի հողի վրայ։

Բայց հաստատենք մեր ասածները քաղուածքներով։

«Հայ ազգը, հակառակ այնքան աղէտներին, դեռ ունի իր մէջ ազգային զօրութիւն, դեռ ունի իր մէջ բարոյական ոյժ — ջանանք գործածել մեր կողմից ամէն հնարաւորն ու կարելին, որ տայ մեզ յոյս մեր աշխատութիւնների աջողութեան մասին և դրանով նոր եռանդ, նոր ոգևորութիւն, նոր ոյժ ներշնչէ մեր մէջ»։ (Հնչակ, 1896 թ. № 10 «Ներկայ վիճակը»)։

«...Պէտք է իմանալ հարկաւոր եղանակներով նրան (հայկական իրականութիւնը) ծառայեցնել մեր ազգային ձրգտումներին*), մեր գաղափարին. պէտք է իմանալ նրա համեմատ ուղղութիւն տալ ու առաջնորդել ազգային ոյժերը*)։ Դա մի շատ դժուարին գործ է, բայց և մեծ գործ է։ Դա մի հսկայական աշխատութիւն է, որ պահանջում է ազգի ամենառանդուն աջակցութիւնը, բայց և յուսալի գործ է, որից կախուած է հայութեան փրկութիւնը„։*) (Հնչակ, 1996 № 15 «Մեր ընթացքը»)։

*) Կուրսիվը մերն։

«Ազգային դրութիւնը այսօր օրհասական է. օրհասական է նաև ազգի գոյութեան ու փրկութեան խնդիրը։ Թող յեղափոխականները, այս տեսական սոսկալի ճրգնաժամի միջոցին մանաւանդ, կանգնած լինենք սուրբ կռւման բարձրութեան վրայ»։ (Հնչակ, 1897 թ. № 10 «Ռումբը»)։

«Հայ կաղնին կանգնած է դեռ, և կանցնեն տարիներ, նա կրկին կուռծնայ, կամրանայ աւելի ուժեղ քան առաջինը և կը շարունակէ կռւել անդուլ, անդադար։ Եթէ ընկնի նաև նոր սերունդը, յաջորդը կշարունակէ միևնոյն կռիւը, մինչև ձեռք բերի այն՝ ինչ ազգային բաղձանք է — հայ ժողովրդի կատարեալ և ամբողջական ազատութիւնը։ (Հնչակ, 1899 № 2 «Յեղափոխութիւնը միակ միջոց»)։

Գուցէ Հնչակեանները մեզ ընդմիջեն և ասեն թէ դա գրուած է եղել մի այնպիսի ժամանակ, երբ հրապարակում կար «մի դատ, վերաբերող մասնաւորապէս Թիւրքաց Հայաստանին, բայց որն իր ներքին իմաստով ընդգրկելով առհասարակ ընդհանուր**) հայութեան պատմական ձգտումները, ընդունել էր համազգային**) կերպարանք...», երբ «իրականութիւնը այն ժամանակ**) խիստ սահմանափակ էր ներկայացնում այն ասպարէզը, բանուոր դասակարգային հողը...» (Վերածնութիւն, № 32)։ Նախ նկատենք, որ այդ օրքան անհեթեթ նոյնքան էլ հեռու է սոցիալիստական պատասխան լինելուց. բայց մի բոպէ ենթադրենք, որ դա ուղիղ է։ Սկսենք, ուրեմն, այն տարուց, երբ բանուորական և սոցիալիստական շարժումները Կովկասում արդէն հզօր դըրդիւնով իրենց հրապարակ գալը յայտարարեցին. երբ, նոյնիսկ Հնչակ-

*) Կուրսիվը մերն է։ **) Կուրսիվը բնագրումն է։

եանների*) խոստովանութեամբ, այդ շարժումները «մեր իրականութեան մէջ հասարակական հիմնական փակտորն ու գործօն ոյժը» դարձան։ Սկսենք 1900-ից։ Այդ տարին էր, որ Թիֆլիսի երկաթուղու արհեստանոցում և քաղաքի բազմաթիւ գործարաններում մի անգամից բռնկուեց գրեթէ ընդհանուր գործադուլ, որտեղ բոլոր ազգութիւնների պատկանող բանուորները ցոյց տուին համերաշխութեան և եղբայրասիրութեան գովելի գործունէութիւն։ Այդ տարի, երբ բռնակալ կառավարութիւնը հարիւրաւոր բանուորների ենթարկեց բանդի, աքսորի և հալածանքների։ Ահա այդ տարի ինչ էր քարոզում Հնչակեան կուսակցութեան «Կենտրոնական Օրգան»ը։

«Եւ դու հայ ազգ, դու՝ որ դարերից իվեր անհաւասար, հերսական կռիւ մղելով՝ կարող եղար քո սիրելի հայրենիքի մէջ ապրել, կենսունակութիւն ունենալ, դու՝ որ իրենց երկրի մէջ թաղեցին ասորական, պարսկական և հռոմէական լեգիոնները, դու մի՞թէ քո ազգային ամբողջ կորովդ, ոյժդ երևան չպիտի բերես և հինգ հարիւր տարի քո վրադ ծանրացած շղթաները փշրես, խորտակես սարկութեանդ անարգ լուծը և բաց ճակատով՝ ազատ հայրենիքի ազատ զաւակ լինես։ — Գոյութիւնդ, կեանքդ է այդ պահանջում» (Հնչակ, 1900 Nr 5 «Հիւանդ Մարդը»)։

«Բայց եթէ կայ մի մեծ կապ, որ բոլոր հայերին անխախտ կերպով իրարու պիտի օղակէր ու նրանց կեանքի հանրական առանցքը դառնար — ապա դա հայկական խնդիրն է, **) որ ստացուածք, սեպհականութիւն է ամբողջ հայութեան և իւր մէջ ամփոփում է համայն հայերի գոյութեան, յարատևութեան հիմունքները իբրև հայ անհատ, իբրև մարդ։ Ուստի ամեն մի հայ, նուիրական առանձին պարտականութիւն ունի դէպի այդ խնդիրը, աշխարհագրական ինչ լայնութեան, ընկերային ինչ

*) Վերածն. թիւ 32։ **) Կուրսիվը բնագրումն է։

վիճակի մէջ էլ որ գտնուի։ Եւ որովհետև հայկական խնդիրը*) ամբողջ հայութեան գոյութեան և մահուան խնդիր է, ուստի, իբրև այդպէս, կռիւը պիտի լինի ընդհանրական, մղուի ամենքի կողմից, — օրը նիւթական օգնութեամբ, օրը բազկով, օրը գրչով ու զէկավարութեամբ, ամենքն էլ ունենալով մի սուրբ նպատակ՝ *) Հայրենիքի ազատութիւնը օտարի կաշկանդող լծից։ Մինչև որ հայը չփշրէ այդ լուծը, մինչև որ չխորտակէ իւր վրայ ծանրացած շղթան — նա չի կարող ապրել իբրև մարդ, ազատ ապրելիս ունենալ իւր ազգային-հասարակական ընդունակութիւնները երևան բերելու և համամարդային ընտանիքի օգտակար, գործակից, հաւասար անդամը դառնալու։ Ուրեմն, աշխատանք, գործունէութիւն պայքարանք բոլորս էլ, համազգային ոյժով, զի գործը համազգային է»։ (Հնչակ, 1900 Nr 5 «Հայութիւն և հանրական խնդիր»։

Գալիս է 1901 թիւը։ Թիֆլիսում — ինչպէս և ամբողջ կովկասում — բանուորները առաջին անգամ քաղաքի կենտրոնում, բացարձակ, կարմիր դրօշակով տօնում են պրոլետարական տօնը՝ մայիսի մէկը։ Հերոսաբար կռւում են ոստիկանութեան և զօրքերի դէմ, արիւն են թափում, զոհեր են տալիս և մեծ քանակութեամբ բանտային մահացու կեանքին մատնւում։ Իսկ «սոցիալիստ» "Հնչակը„, իր միւերկու համարների մէջ այդ դէպքի, ինչպէս նաև ամբողջ Ռուսաստանի բանուորական շարժման մասին մի քանի հարևանցի տեղեկութիւններ տալով, դրանով էլ շատանում է և իր համարներից մէկում սկսում է բառբառել այսպէս.

«Անուրանալի է, որ մարդկութեան ներկայ պայմանների մէջ գոյութիւն ունեն միայն ազգային կազմակերպութիւններ, հետևաբար հասարակական գործունէութիւնները իրենց վրայ պիտի կրեն, ինչքան ժամանակ որ հարկաւոր լինի, ազգային ձև, ազգային կաղապար։

*) Կուրսիվը բնագրումն է։

Հասարակութեան մէջ-մի շարժում պէտք է գործադրի ազգային հիմունքների վրայ, միևնոյն ժամանակ գիտակցութիւն ունենալով, որ ամեն անգամ մղած կամ ձեռք բերուած իւրաքանչիւր կռիւ և յաղթանակ այս և այն ազգերի մէջ, ինքն ըստ ինքեան, մի մի քայլ են դէպի համամարդկային իդէալի իրականացումը և նրանց բոլորի մէջ կայ մի ընդհանուր համանման գիծ և սերտ յարաբերութիւն: Դեռ ևս երկար ժամանակ ազգն է, որ պիտի հայթայթէ համամարդկային իդէալի ծիրը, երբ արդարութեան եւ ճշմարտի արեւը նոր սկսում լինի բոցավառել մարդկութեան հորիզոնի վրայ:*) Հետևաբար, հայկական մէջ-մի շարժում, մէջ-մի ձեռնարկ դէպի իր ազատագրութիւնը, որ հասկացուում է քաղաքական-հասարակական որոշ պայմանների և իրաւունքների ձեռք բերելը Հայաստանում, մի կողմից՝ պէտք է կազմակերպուած լինեն ու ընթացք ստանան համազգային ջանքերով ու միջոցներով և ներկայացնեն իրանցից ընդհանուր համազգային զօրութիւն. միւս կողմից, միևնոյն տեսակէտից առաջնորդուած, յեղափոխական կազմակերպութիւնները պէտք է լինեն հարազատ ներկայացուցիչ եւ ամբողջական, հաւատարիմ արտայայտող ազգային հասարակական շարժումներին ու գործողութիւնների*):

«Ահա ժամանակն է, որ ազգային ինքնաճանաչութեան*) և լրջութեան առաջ բացւէ նոր շրջան, նոր պրօկրամով և աւելի լայն ձգտումներով, որ բերում են կեանքն ու եղելութիւնները, և որի գրօշի վրայ պէտք է գրուած լինեն համազգային նպատակ. համազգային գործ, **) ուր ժողովրդի կամքը և շահը կը լինեն միակ օրէնքը յեղափոխական ընդհանուր գործունէութեան», (Հնչակ, 1901 № 6 «Ժամանակ է»:

1901-ին յաջորդում է 1902-ը, մի արիւնալի տարի Կովկասի ամբողջ բանւորութեան համար: Յեղափոխական-սոցիալիստական շարժումը տարածւում է Կովկասի միւս քաղաքներում ևս: Բաքւում լինում է քաղաքական

*) Կուրսիվը մերն է: **) Կուրսիվը ընագրումն է:

փառահեղ ցոյց: Բաթումում բանւորները դրդուած ընկերական սիրուց և համերաշխութիւնից, շրջապատում են բանտը, որպէսզի ազատեն իրենց բանտարկեալ ընկերներին: Դրանք ընթհանրում են ունենում զօրքի հետ և բանտի պատերի տակ թողնում են տասնեակ բանւորների դիակները, որոնց թւում և հայ բանւորներինը: Այդ դէպքերի նկարագրութիւնները լոյս են տեսնում Հնչակում, որոնց ուղեկցում են հետևեալ նշանաւոր խօսքերը, միանգամայն բնորոշող Հնչակեան "սոցիալիզմ"ը:

«Կատարուած վերջին իրողութիւնները ցոյց են տալիս, որ հետզհետէ աւելանում է այն հայ ինտէլիգէնտների և բանւորների թիւը, որոնք չկարողանալով դիմադրել ուժեղ հոսանքին՝ գնում են նրա հետ, մոռացման տալով այն ծանր, այն ահագին, այն պատասխանատու պարտականութիւնը, որ ընկնում է այս բոպէիս ամեն մի հայի վրայ, առանց դասակարգային կամ կրօնական կամ աշխարհագրական խտրութեան, հանդէպ մի անհրաժեշտ գործի, որ ցաճկահայաստանի Ազատութեան հարցն է, որ դրուած է ամբողջ Ազգութեան առաջ եւ որին պիտք է գնան նուիրուելու առանց խտրութեան բոլոր հայերի նիւթական եւ բարոյական ոյժերը: Մեզ միանգամայն անհասկանալի է թւում թէ ինչպէս այն հայ ինտիլլիգէնտ և բանւոր տարրերը, որոնք այնքան գեղեցիկ և օրինակելի անձնուիրութեամբ երևան եկան վերջին ցոյցերի մէջ, չեն կարողանում տեսնել, որ ինքնուրոյն, սեփական Հայրենիքը, նրան օտարի բռնապետական լծից ազատելը կազմում է բանւորական իդէայների առաջին եւ սկզբնական հիմնաքարը, ինչպէս չեն կարողանում տեսնել որ թողնել Հայրենիքը կաշկանդուած ստրկական շղթաների մէջ ու ընկնել լոկ դասակարգային նեղ շահերի պաշտպանութեան ետեւից, այն ժամանակ երբ Հայրենիքի պաշտպանութիւնը պահանջում է, առանց դասակարգային խտրութեան, ամբողջ ազգի այլ եւ այլ բաղկացուցիչ մասերի համագործակցութիւն, նշանակում է մեղանչել նոյն այն ազգութեան դէմ, որին պատկանում են եւ իրենք*):

«Այդ տեսակէտից, այսինքն Հայկական տեսակէտից դատելով խնդիրը, իսկապէս ռուս սոցիալ-դեմոկրատիան մի

* Կուրսիվը մերն է:

վնասակար գործ է որ կատարում է, հեռացնելով հայերին, յանուն դասակարգային շահերի այն միակ շարժումից՝ որին պէտք է որ նուիրէ իրեն հայը առանց դասակարգային կամ ուրիշ որեւէ կարգի նկատումի*) և մենք, որքան էլ համակրելի գտնենք ռուս միահեծան պետութեան դէմ մղուած պայքարը, չենք կարող չպախարակել այն հայերին, որոնք, գիտակցաբար թէ անգիտակցաբար, դեր ի վերոյ են դարձում իրենց դասակարգային եւսական շահերը ազգային ընդհանուր շահերից,*) որքան էլ բարձր և նուիրական լինէին նրանք իրենք իրենց մէջ։ Պէտք է ըմբռնեն վերջապէս մեր հայ բանուորներն ու հայ ինտելլիգէնտները, որոնք նուիրում՝ են իրենց բանուորական իդէային, որ բանուորական կամ, գործածելով բուն բառը, սոցիալիստական գաղափարը, որքան էլ զօրաւոր իրաւունքներ ունենայ յայտնուելու հայկական կեանքի մէջ, նա սակայն գործնական կեանք չէ կարող ունենայ, քանի չէ իրագործուած Ազգային Հայրենիքի ազատութեան գործը, որ պէտք է միակը կլանէ այս բոլոր էս բոլոր հայերի ազատական բաղձանքները, մի կողմ թողնելով այն բոլորը, որ չէ նպաստում այդ առաջին անհրաժեշտ հորցի լուծմանը»*)։ (Հնչակ, 1902 № 3 "Պայիսեան Տօնը Բաքուում,,)։

"Այս իրողութիւններ գրելով ձեզ, յարգելի խմբագիր, ես նպատակ չունեմ քաջալերելու հայերին այսպիսի շարժումների համար, ոչ ամենեին։ Ես, ընդհակառակը, կարծում եմ որ այդպիսի շարժումներ որքան էլ արդար և օգտակար լինեն Ռուսաստանում բողոքելու համար ռուսական բռնապետական կառավարութեան դէմ, սակայն մենք հայերս չենք կարող եւ չպէտք է մասնակցենք նրանց,*) որովհետև մենք, հայերս, չպէտք է մոռանանք որ թշուառ շարչարուած և հարստահարուած մի հայրենիք ունենք, որ ամեն րոպէ ենթարկուում է տաճկական գազանի կամայականութեան, որից պէտք է ազատենք նրան՝ նուիրելով մեր բոլոր ուժերը միայն և միմիայն նրան։

"Ամեն հայի վերայ սրբազան պարտականութիւն կայ չմոռանալ իւր հայրենիքը։ Եւ սակայն ցաւելով պէտք է

*). Կուրսիվը մերն է։

ասենք որ ամենքը այսպէս չեն մտածում. կան բաւական թւով հայեր, ինչպէս այս դէպքը ցոյց տուաւ, որոնք մոռանում են այդ առաջին և նուիրական պարտականութիւնը...,, (Հնչակ, 1902 № 3, "Դամակ Բաթումից,,)։

"Հնչակի,, "յարգելի խմբագիրը,, տպելով այս բոլորը, իր կողմից ոչ մի նկատողութիւն չարեց, ցոյց տալով դըրանով անշուշտ իր համաձայնութիւնը թղթակիցների կարծիքների հետ։

Այս բոլորը այնքան պարզ են, որ մեր կողմից բացատրութիւնների, կոմենտարների կարիք չը կայ։

Անցնենք այժմ Հնչակեան կուսակցութեան "Նոր Գործունէութեան,, որի դարձշրջանը սկսում է 1903-ի յունիսից։

III.

ՀՍԶԱԿԵԱՆ "ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

"Վերեւում առաջ բերած թղթակցութիւնների թւից անցնում է ուղիղ մի տարի և ահա հրապարակ է գալիս "Վերածնութիւնը,, իր "Նոր գործունէութեան,, պլաններովը։ "Վերածնութեան առաջին գործն է լինում յայտարարել նախ՝ որ "Հնչակեան անունն ըստ ինքեան բաւական կը լինէր որոշելու համար թէ ո՞րն է թերթիս (Վերածնութեան) ուղղութիւնը։ Արդարև, Հնչակեան բոլոր օրգանները, թէ մամուլը, թէ կազմակերպութիւնը, թէ գործունէութիւնը, զանազան ճիւղաւորութիւններ են միևնոյն հոսանքի, որի ընդհանուր մայր աղբիւրն է Հնչակեան ծրագիրը,, ապա՝ "նա հետևող է այն գաղափարների, նա ջատագով է այն սկզբունքների, նա ձգտող է դէպի այն նպատակները, որոնք տասն և հինգ տարիից ի վեր քարոզել և արծարծել են Հնչակեան մամուլի մէջ և որոնք հէնց այդ մամուլի շնորհով է, որ, առաջին անգամ լինելով, մուտք գործեցին և ծաւալ ստացան ամբողջ հայութեան մէջ» (Վերածնութ. 1903 № 1

Մենք տեսանք արդէն թէ ինչ բան է քարոզել մեզ Հնչակեան մամուլը։ Ծ. Հ.)

Այսպիսով «Վերածնութիւն»ը սրբագործում է այն բոլորը, ինչոր Հնչակեան մամուլը քարոզել և նրա կազմակերպութիւնները իրագործել են, որոնց թւում անկասկած մեր առաջ բերած ցիտատների մէջ արտայայտուած մտքերը։ Այս բոլորից յետոյ մենք արդէն այժմեանից կարող էինք գուշակել թէ ինչ պտուղ է այդ «Նոր գործունէութիւն»ը, բայց աւելի լաւ է թողնենք. որ «Վերածնութիւն»ը ինքը խօսէ։ Նոյն «Վերածնութիւն»ից մենք ստանալու ինք նաև մեր մէջ բնականօրէն ծագող հարցի պատասխանը, թէ ինչ՞ Հնչակեան այդ «Նոր գործունէութիւն»ը այդքան ուշ բարեհաճեց հրապարակ գալ։

Դեռ «Հնչակ»ի 1903 թուի յունիսի համարում կարդում ենք հետեւեալ տողերը. «Մեր դատը ռուսական տէրութեան կողմից նկատուած է իբրև Ռուսաստանի ներքին դատ։ Այդ հանգամանքը աւելի կշիռ է ստանում և նրանից, որ ռուսական պետութեան հպատակ են այսօր երկու միլիոն հայ, որոնց աշխարհագրական դիրքը շարունակութիւն է Թիւրքաց Հայաստանի։

"Եւ այդպէս յայտնւում է, որ թիւրքահայ դատի լուծումն այլեւս ուղղակի կերպով կապուած է—և այսօր աւելի քան առաջ — ռուսական քաղաքականութիւնից։

"Մենք գտնւում ենք այժմ մի նոր գործունէութեան առաջ։ Եթէ մենք չենք ուզում յեղափոխական գործունէութիւնը, մնալանդ իր այս երկար տարտամութիւնից յետոյ — դատապարտել կատարեալ մահացման . . . *) թող չը կրենք երկիւղ այս նոր ընդարձակ ասպարէզներից, որ բացւում են գործի առաջ ներկայումս, ընդլայնում մեր հասարակական պարտականութիւնների սահմանը, բերելով մեր առաջ մի նոր գործունէութիւն,**) իր վեհ պահանջներով ու բեղմնաւոր արդիւնքներով»։

*) Կուրսիվը մերն է։ **) Կուրսիվը ընագրումն է։

Եթէ «Հնչակ»ը առաջին անգամ գրեց «Նոր գործունէութեան», հարցը հրապարակի վրայ, «Վերածնութեան» էլ պատկանում է նրա պարզաբանելու և աւելի ընդլայնելու պատիւը։ Նա նախ և առաջ, այսպէս ասած, «Նոր գործունէութեան» պահանջը գիտնականօրէն է սկսում բացատրել։

"Յեղափոխական գաղափարը ըստինքեան գործեց իր ազդեցութիւնը, անցաւ այդ բովից և դուրս եկաւ զօրաւոր, փորձած, աւելի պայմանաւորող հայութեան գոյութիւնը, խնդիրն ու նրա առաջադիմութիւնը, աւելի ծանրանալով հայ խղճմտանքի վրայ՝ իբրև անպայման կերպով իր գործադրութիւնը պահանջող մէկ անհրաժեշտութիւն։

"Այսպէս է գաղափարի ոյժը . . . նա իր բարձր իմաստով, իր լուսաւոր եդէալով թափանցում է իրան մատչելի գիտակցութիւնների խորը, տիրանում է նրանց և ներշնչելով նրանց իրա մեծ նշանակութեամբ, թեւաւորում է նրանց միտքը, որն այդ բոպէից սկսում է լայնանալ և ընդգրկել մէկ ամբողջ ժողովրդի պատմական ճակատագիրն ընդհանուր մարդկութեան զարգացման շրջանակում։

"Այսպէս է, օրինակ, որ յեղափոխական գաղափարը մեզանում սկզբները հայ գիտակցութիւնների կողմից ընդունուեցաւ առհասարակ իբրև մէկ ապստամբական կռիւ ընդդէմ թիւրք բռնակալութեան, մինչև որ ժամանակի ընթացքում բարձրացաւ այդ բաւական պարզկայ ու դիւրին հասկացողութիւնից, տարրեց ու յուզեց մտքերը, գնելով դրանց առաջ մի շարք գաղափարական հարցեր, տեսական դրութիւններ, որոնք դուրս էին ծորում իրենց մայր աղբիւրից, այսինքն գաղափարի անմիջական իմաստից։

" . . . ընդլայնելով հասկացողութեան սահմանը, պէտք է ընդլայնանայ նաև գործունէութեան ասպարէզը, պէտք է նոր աղբիւրներ առաջանան գտնելու յեղափոխական թռիչը նրանց մտքերում, որով յեղափոխական գործն

ինքը կը գտնէ անսպառ ոյժ իր առաջխաղացութեան համար, իր գործնական կենդանութեան համար, իր այնպիսի վերածնութեան համար, որ նրան կը տանէ դէպի յաղթութիւն։ Յեղափոխական գաղափարի այդպիսի հասկացողութեան թափանցումը հայ յեղափոխական շարքերում ընդարձակում է դրանց գործունէութիւնն ամբողջ*) հայութեան վրայ, որպէս մասիսից հարաւ, նոյնպէս և դէպի հիւսիս։ Եւ դրանումն է հայկական իրականութեան պատմական պահանջը ներկայումս, մի պահանջ, որ նրան պէտք է տանէ դէպի վերածնութիւն։

"Որովհետև կեանքը միշտ առաջ է ընթանում, և այն մեծ գաղափարը կամ այն մասնիկն ազատութեան, որ մենք կը թողնենք մեր ժառանգներին՝ կը քաղցրացնէ նրանց կեանքը և կը տայ նրանց ոյժ, միջոց ու դիւրութիւն աւելի առաջադիմելու իրենց ազգային ու մարդկային զարգացման մէջ։" Եւ այս արդիւնքին հասնելու համար. "պէտք եղաւ ամբողջ տասն և հինգ տարիից ի վեր գաղափարների սերմանումն և յեղափոխական գործունէութեան փորձառութիւն**)։

"Նոր գործունէութեան" թէորիան այսպէս գիտնականօրէն բացատրելուց յետոյ, "Վերածնութիւնը" գաղափարների բարձունքներից ցած է իջնում մեղաւոր աշխարհը և այդ գործունէութեան գործնական կողմը բացատրում հետևեալ ձևով։

"Կարող ենք մենք, քանի որ գոյութիւն ունի Ռուսաստանի բացարձակ գերակշռութիւնը, հասնել Թիւրքահայ դատի լուծման մեր կուռվ միմիայն Թիւրք պետութեան դէմ։ Ենթադրելով իսկ, որ մենք ընդունակ

*) Կուրսիվը ընագրի մէջ է։ **) Վերածնութիւն, 1903 Nr 4, "Գործը"։ Մենք խորհուրդ կը տայինք ընթերցողների կարդալ ամբողջ այդ յօդուածը, որն անշուշտ մի հետաքրքիր նմուշ է Հնչակեան "մետերալիստական հասկացողութեան")։ Ծ. Հ.

յայտնուենք ապստամբական կռիւ մղելու սուլթանական բռնակալութեան դէմ, չէ՞նք հանդիպիլ արդեօք մի այլ սոսկալի բերդի, որի դէմ կուելն անհնար է Թիւրքահայ հողի վրայ, չէ՞նք հանդիպիլ արդեօք ռուսական քաղաքականութեան սիստէմական ընդդիմութեան . . .

"Բացառապէս*) Թիւրքահայ դատի հողի վրայ գործել այլևս անհետևանք է թւում այդ դատի լուծման համար։ Այդ դատի լուծման կենտրոնակշիռը տեղափոխուած լինելով Ռուսաստան, այդ երկրում ևս պէտք է կռել երկաթը՝ յեղափոխական գնդանի վրայ . . .

". . . Եւ քանի որ Թիւրքահայ դատի լուծումը կախուած է ռուսական պետութիւնից, ըստ ինքեան պարզ է, որ այդ լուծման պէտք է և կարող է նպաստել ռուսահայկական գործունէութիւնը, մղելով կռիւ ռուսական բռնակալութեան դէմ։ Եթէ միմիայն ռուսահայերը լինէին դէմ առ դէմ այդ բռնակալութեան, անտարակոյս ցնորք պիտի համարուէր այդ գործունէութիւնը։ Բայց ամբողջ Ռուսաստանն իւր բազմազան ցեղերով ու տարբերով գտնուում է ներքին ահաւոր քաղաքական կուռում բռնակալութեան դէմ, մի կռիւ, որ գնալով աւելի սաստկանում ու ծաւալում է, և այդ պարագայում ռուսահայկական յեղափոխութեան ջանքերն ընդհանուրի հետ միասին կարող են յուսալ իրանց առաւել կամ նուազ մօտ յաղթութիւնը։ Ահա դա է ռուսահայկական կռիւի գործնական պայմանը, որ դեռ երեք-չորս տարի առաջ գոյութիւն չունէր, քանի որ գոյութիւն չունէին ռուս յեղափոխական այն լայնածաւալ շարժումներն ու խռովութիւններն, որոնք այսօր սկսել են մրրկայոյզ դարձել ռուսական բռնակալութեան արդէն խախուտ պատնէշներին և սրանք, անտարակոյս, դատապարտած են խորտակման։ Այդ խորտակումը կը լինի նաև լուծումը Թիւրքահայ դատի"։ (Վեր. 1903 Nr 9 "Թիւրք. Դատը")։

"Վերջին տասը տարիների պատմութիւնը ամենահամոզեցուցիչ փաստերով մեզ սովորեցրեց, որ հայկական

խնդրի լուծման ամենաշօրաւոր արգելքը, ինքը ռուս պետութիւնն է, որ մեր անմիջական թշնամին միայն տաճիկ կառավարութիւնն չէ, այլ և ռուս, որ վերջինս Տաճկա-Հայաստանը իւր ապագայ սեփականութիւնը համարելով, հայկական խնդիրը իր ներքին խնդիրներից մէկն է համարում։ Ուրեմն քանի որ դեռ իշխում է ռուսական ներկայ քաղաքականութիւնը, հայկական յեղափոխութեան բոլոր ճիգերը, որքան և գերազանց լինեն նրանք, անկարող են կորզելու Տաճկա-Հայաստանում թէկուզ մի քիչ գետին հայկական ինքնավարութեան համար, Թիւրքիայի եւ Իտալիայի պէս հզօր պետութիւնների ճիրաններից**)»։ (Վերածն. 1903 Nr 24 «Նոր գործունէութեան մասին»)։

«Հասնենք թէ հայութեան համար կայ մենակ մի դատ, Թիւրքահայ դատ, երբ արդէն ինքնաբերաբար եւ իրականութեան բերումով*) ռուսահայի վրայ էլ, ինչպէս և Թիւրքահայի, ընկած է մի սուրբ պարտականութիւն, մի ծանր գերդ, մի մեծ կռիւ, որի ելքից է կախուած հայ ժողովրդի, ամբողջ հայ ժողովրդի մարդկային ազատագրութիւնը և առաջադիմութիւնը։

«Մենք ուզում ենք յուսալ, մենք ուզում ենք հաւատալ, որ հայ ճշմարիտ յեղափոխական ընկերները, բոլոր յեղափոխական ընկերները, կառաջնորդեն արդարամիտ ոգով ու հաստուն մտքով և հարազատ ժողովրդի ներկայ տագնապի միջոցին կը կարողանան կանգնել իրանց պարտականութեան բարձրութեան վրայ և կիմանան քննել ու պարզել հայ յեղափոխական ներկայի մեծ խնդիրները։ Այդ յուսով այդ հաւատով լի՝ մենք բացականցում ենք. — կեցցէ՛ հայկական յեղափոխութիւնը»։ (Վերածն. 1903, 27 Թիւ, «Խնդիրներ»)։

Պարզ է, որ այս ուղղութեամբ սկսուած "Նոր գործունէութիւն„ը պահանջ առաջ պիտի բերէր նաև ունենալ մի ընդհանուր համահայկական յեղափոխական

*) Կուրսիվը ընագրումն է։ **) Կուրսիվը մերն է։

կուսակցութիւն, թէ տաճկահայ և թէ ռուսահայ հողի վրայ։ Եւ ահա "Վերածնութիւն„ն սկսում է իր էջերում շօշափել և լուսաբանել այդ հարցը.

"Կոչ„ի համաձայն հայութեան առաջ այսօր կայ երկու դատ, որոնք ընթանում են զուգընթացաբար և որոնք պահանջում են "միատեղի եւ միաժամանակեայ*) յեղափոխական գործունէութիւն„։ Այդ երկու դատն են՝ Թիւրքահայ և ռուսահայ, և յեղափոխական գործունէութիւնն էլ՝ "միատեղի և միաժամանակեայ„ կերպով թէ Թիւրքից Հայաստանում և թէ կովկասում„։

"... առաջ են գալիս նաև կազմակերպական խնդիրներ, որոնք ենթադրելով հանդերձ յեղափոխական գործի մէկ և ընդհանուր ղեկավարութիւն մէկ և ընդհանուր կենտրոնական մարմնի միջոցով, մասնաւորում են սակայն մէկ այլ պայման, այն է՝ այդ երկու երկրի իւրաքանչիւրի տեղական*) կազմակերպութիւն, տեղական*) ինքնավար դրութիւն։

"Այս "Կոչ„ը ծրագրային բնաւորութիւն ունի և ընդհանուր կերպով ամփոփում և արտայայտում է այն ուղղութիւնը, որն այժմ յայտնի է "Նոր գործունէութեան*)„ անուան տակ„։ (Վեր. 1904, Թիւ 33 "Մի Կոչ„)։

Այս ամենը ցոյց են տալիս, ուրեմն, որ "Նոր գործունէութիւն„ը էապէս կայանում էր նրանում, որ Հնչակեան Կուսակցութիւնը, մնալով զուտ ազգայնական կուսակցութիւն, ընդարձակում է իր յեղափոխական գործունէութեան սահմանը և կովկասահայերի վրայ, որովհետև այդ անհրաժեշտ է գտնում Թիւրքահայ դատի լուծման համար**)։

---

*) Կուրսիվը ընագրումն է։

**) Մեր այս խօսքերից, իհարկէ, չը պէտք է եզրակացնել, որ մենք մեղադրում ենք Հնչակեան Կուսակցութիւնը նրա համար, որ նա տաճկահայ դատի լուծման անունով ուզում է կուլել նաև ռուսական բռնակալու-

Դրանից յետոյ ոլքան ծիծաղելի է "Վերածնութեան" և առհասարակ Հնչակեանների ջանքերը, որոնք ուզում են մեզ հաւատացնել և համոզել, որ նրանց "նոր գործունէութեան" բուն շարժառիթը կովկասահայ պրոլետարիատի մէջ գործելու պահանջն էր։ Այդ նշանակում է պարզապէս խաբել հայ բանւորներին և համարել նրանց տխմարներ, որոնք իբր թէ չեն կարող տեսնել Հնչակեան այս նոր ձեռնածութիւնը։

IV.

ՀՍԶԱԿԵԱՍ "ՆՈՐ ԿՈՒՐՍ"-Ը

Բայց մեր զբոսանքը Հնչակեան մամուլի այգեստաններում թերի կը լինէր, եթէ մենք անուշադիր թողնէինք այն յանկարծակի փոփոխութիւնը, որ նկատելի դարձաւ "Վերածնութեան", Հնչակեան այդ "սոցիալիստական" օրգանի մէջ, 1904 թ. յունուարից սկսած։ Այդ փոփոխութիւնը կայանում էր մի կողմից նրանում, որ Հնչակեան այդ օրգանը անսպասելի կերպով սկսում է խօսել Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանւորական Կուսակցութեան մասին և ցոյց է տալիս դէպի նա մեծ համակրական նշաններ, իսկ միւս կողմից՝ իր էջերում սկսում է գովաբանել այդ կուսակցութեան կազմակերպչական ֆորմը։ Այս փոփոխութիւնը, որին մենք ընդհա-

---

թեան դէմ։ Բոլորովին ոչ։ Առհասարակ մեր նպատակից դուրս է եղել այստեղ քննադատել Հնչակեան կուսակցութիւնը, որպէս Ցամկա-Հայաստանում գործող ազգային-յեղափոխական կուսակցութիւն։ Մենք քննադատում ենք նրան այն չափով, որչափով որ նա իր յեղափոխական գործունէութիւնը կապում է պրոլետարիատի դասակարգային կուռի և շահերի հետ։ Դէպի տաճկահայ խնդիրը և նրան լուծելու միջոցները մենք ունենք ուրիշ կարծիք, որի մասին մի այլ անգամ կը խօսենք։

նուր առմամբ "նոր կուրս" անունը տուինք, մեզ հարկադրում է մի քիչ կանգ առնել իւր վրայ։ Մենք յատկապէս խօսելու ենք "Վերածնութեան" կազմակերպչական հայեացքների մասին։ Տեսնենք ինչ է ասում նա իր 1904 թուի 34-րդ համարից սկսած։

"Ռուսաստանի զանազան ազգերի սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը միաժամանակ ընդգրկում է Ռուսաստանի զանազան ազգերի սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնները, որոնց մէջ նաև հայ սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւն յանձին "Պրոլետարիատ"-ի խմբի։ Այդ իւրաքանչիւր կազմակերպութիւնը ինքնուրոյն է իր ազգային եւ աշխարհագրական շրջանում եւ միաժամանակ գործում է "Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական ծրագրի" հիման վրայ եւ նրա կազմակերպչական կանոնագրի համաձայն (կուրսիվը մերն է)։

"Մենք կարծում ենք և մենք համոզված ենք, որ ռուսահայ բոլոր սոցիալ-դեմոկրատների պարտականութիւնն է մտնել արդէն կազմված "Ռուս. սոց.-դեմ. կուսակցութեան" մէջ, կազմելով նրա հայկական ճիւղը՝ իբրև հայկական կազմակերպութիւն։ Ինչպէս արդէն ասացինք, հայկական սոցիալիստական տարրերից բաղկացած այդպիսի մի կազմակերպութիւն արդէն գոյութիւն ունի Ռ. Ս.-Դ. Բ. Կ. մէջ և մինչև այսօր նա ցոյց է տուել մի ժրաջան գործունէութիւն Կովկասում հայ բանւորների մէջ" (Վերածն. 1904 Nr 34 "Սոց. Դեմոկր.)։

"...Վինի մի կամ մի քանի ազգութիւններից բաղկացած այդ կուսակցութեան (սոցիալ-դեմոկրատականս) կազմը իրաքանչիւր երկրում նա իր ամբողջութեամբ պէտք է կազմէ մի մարմին՝ մէկ եւ ընդհանուր ղեկավարութեան ներքոյ։

"...Մեզ անհասկանալի է թւում, թէ ինչո՞ւ Ռուսաստանում զանազան ազգերի ու զատ սոցիալիստները պէտք է ներկայանան իբրեւ ինքնուրոյն սոցիալիստական կուսակցութիւններ եւ իսկապէս չը լինեն մի ճիւղը — օր. հայ սոցիալիստներն իբրեւ հայկական կազմակերպութիւն — մէկ եւ ընդհանուր մի կուսակցութեան մէկ եւ ընդհանուր ամբողջական կազմակերպութեան" (Վերածն. 1904 Nr 35 "Հրատապ Հարց". կուրսիվը մերն է)։

Զարմանալի է, չէ՞, Հնչակեանների բերանում այս խոսքերը, մանաւանդ եթէ չենք մոռացել նախկին ցիտատները, բայց պիտի ասենք, եթէ մի հարեւանցի ակնարկ գցենք այն բոլորի վրայ, ինչոր Հնչակեան պուբլիցիստները մինչև այդ քարոզել էին նոյն "Վերածնութեան„ էջերում կազմակերպչական հարցերի վերաբերմամբ։ Խնդրում ենք ընթերցողներից ուշադրութեամբ կարդալ յետագայ ցիտատները և բաղդատել վերևում գրուածների հետ։

"Թող նրանք (հայ սոցիալիստները) սկզբից իսկ ձգտեն միմեանց հասկանալ, մոռանալ մայր բնածին հակառակութեան ոգին, առանձնակի դեր խաղալու և ավտորիտետ ձևանալու հակասոցիալիստական բնազդը. . . այն ժամանակ կը ստեղծուէ հայ սոցիալիստական մէկ ընդհանուր եւ հզօր կուսակցութիւն*)„ (Վերածն. 1903 Nr 6 "Սոցիալիզմ„)։

"Ամենակարդ խնդիր է հանդիսանում ծրագրային գործնական յարաբերութիւնների մշակումը հայ սոցիալիստական այլ խմբերի հետ*)։ Սրանով մենք միայն առաջ ենք գնում այս խնդիրը։ Ջերմ մաղթող ենք հայ սոցիալիստների միութեան և հայ սոցիալիստ-յեղափոխական մէկ եւ ընդհանուր կուսակցութեան ստեղծման*) (Վեր. 1903 Nr 8 "Հնչ. կուս.„)։

"Մեր ամենաջերմ խոնջը լինելով շուտով կազմուած ու հաստատուած տեսնել հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւն*), և այդ մաքով հրաւէր կարդալ մեր բոլոր հայ սոցիալիստ ընկերներին, մենք բացականչում ենք կեցցէ՞ հայ սոցիալ-դեմոկրատիայ*) (Վերած. 1903 Nr 27 "Խնդիրներ„)։

"Դէ ահա ինչու բնական, անհետաձգելի և անխուսափելի պայմանն է մեզանում այժմ կազմել մէկ ընդարձակ ու հզօր սոցիալիստական կուսակցութիւն*) . . . և դրա հետ միասին հայ սոցիալիստական կուսակցութիւնը պէտք է օգնէ և աջակցէ այն ամեն յեղափոխական շարժումներին, որոնք ձգտում են տապալել բռնակալ լուծը", (Վերածն. 1903 Nr 29 "Սոց. կուսակցութիւն„)։

Պարոնեանը եթէ այժմ կենդանի լինէր, շատ պիտի

*) Կուրսիվը մերն է։

զարմանար անշուշտ, որ նրա երգիծաբանօրէն ասած խոսքերը — թէ "կարծիքները պէտք է սպասաւորներու պէս գործածել. շոյելու է զանոնք եթէ քեզի շահ կը բերեն, իսկ վռնդելու է երբ շահուդ կը դպչեն„, — Հնչակեան կուսակցութիւնը ամենայն ճարպիկութեամբ և հետևողականութեամբ կեանքի մէջ գործադրում է։ Ա՛յլապէս ինչո՞վ պէտք է բացատրել Հնչակեան այս քայլը, քանի որ դեռ 33-րդ համարի — որտեղ, ինչպէս տեսանք, ամենալուրջ կերպով քննւում էր ընդհանուր համահայկական կուսակցութիւն հիմնելու հարցը — վրայի թանաքը չը չորացած, "Վերածնութեան„ 34 և 35 համարներից, այսինքն, մի-երկու շաբաթ յետոյ բոլորովին հակառակն ենք լսում։ Գուցէ սա մի հրաշք էր, այն մեծ հրաշքներից, երբ երեկուան անդամալոյծը այսօր առոյգ մարդ կարող էր դառնալ։ Բայց որովհետև հրաշքների դարը վաղուց անցել է, ուստի մենք պարտաւոր ենք փնտռել դրա հասարակական պատճառները։

Հնչակեան այս "նոր կուրս„ի հաւանական հասարակական պատճառները, կարծում ենք, պէտք էր լինէին կամ Ռուս. Սոց.-Դեմ. Բանւոր. Կուսակց. կազմելը, նրա երկրորդ համագումարը, և կամ կովկասահայ իրականութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները։ "Վերածնութեան„ այն մի քանի համարներից, որոնցից մենք վերոյիշեալ քաղուածքները մէջ բերինք, այն տպաւորութիւնը կարող է ստանալ մարդ, որ իբր թէ դա կապ ունի Ռ. Ս.-Դ. Բ. կուս. հետ։ Սկսենք ուրեմն դրանից։

Հնչակ. կուսակց. միայն 1904 թ. յիշեց, որ Ռուսաստանում գոյութիւն ունի ռուս. սոց.-դեմ. կուսակցութիւն, "որը միաժամանակ ընդգրկում է Ռուսաստանի զանազան ազգերի սոցիալ-դեմոկր. կազմակերպութիւնները„, և կամ կովկասում գոյութիւն է ունեցել "Պրոլետարիատ„ի խումբը, որը արդէն միացել է Ռուս. սոց.-դեմ. բան. կուսակցութեան հետ„։ Մենք այստեղ ուզում ենք յիշեցնել Հնչակեան "սոցիալիստներին„ հետևեալը. Ռուս.

սոց.-դեմ. բան. կուս. կազմել է դեռ 1898 թվին՝ ուշնենալով նաև Կովկասում իր կոմիտէն։ Այդ կուսակցութեան մի մասի ձեռքով 1900-ի վերջերում հիմնել է "Իսկրա„ անունով թերթը, որի 21-րդ համարում (1902 յունիս) զետեղած է եղել այդ կուսակցութեան ծրագրի նախագիծը, որը երկրորդ համագումարում (1903 հոկտեմբեր) չնչին փոփոխութիւններով ընդունել է։ "Իսկրա„ն հէնց առաջին համարից սկսեալ հրապարակ է դրել և պաշտպանել է կազմակերպչական այն փօրմը, որը նոյնպէս շատ քիչ փոփոխութիւնով երկրորդ համագումարում ընդունել է կանոնադրութեան ձևով։ Եւ վերջապէս, "Իսկրա„ի և առհասարակ Ռուս. Սոց.-Դեմ. Բան. Կուսակց. այն ուղղութիւնը, որի այդպիսի ջերմ երկրպագու յանկարծ հանդիսացաւ Հնչակ. կուսակցութիւնը իր "Վերածնութիւն„ով, քարոզել է ամբողջ չորս տարուայ ընթացքում։

Երկրորդ՝ դեռ 1902-ի վերջերում լոյս տեսաւ "Պրոլետարիատ„ը "Հայ Սոցիալ-Դեմոկրատների Միութեան„ հրատարակութեամբ։ 1903-ի սկզբներում "Պրոլետարիատ„ի ու վերջ "Պրծոլայ„ թերթի խմբագրութիւնները և Բաքուի, Բաթումի ու Թիֆլիսի կոմիտէները միանալով կազմել են Ռուս. Սոց.-Դեմ. Բան. Կուսակց. "Կովկասեան Միութիւն„, որից յետոյ "Պրոլետարիատ„ի խումբը փաստօրէն գոյութիւն ունենալուց դադրել է*)

*) Այստեղ էլ հէնց նկատենք, որ Կովկասեան Միութեան "գործերին մօտիկ մասնակցութիւն ունեցողներից„ մէկը "Իսկրա„ի էջերում (տես Nr 72) յայտարարում է, որ "Հայ Սոց.-Դեմ. Միութիւն„ը երբէք "գոյութիւն էլ չէ ունեցել„, որ այդ անունը գործածել է լոկ "ագիտացիական նկատումներով„։ Այլ խօսքով, հայ բանուորներին գրաւելու համար "Պրոլետարիատ„ը հրատարակել են մի գոյութիւն չունեցող "Հայ Սոց.-Դեմ. Միութեան„ անունով։ Իսկ Հնչակեաններն էլ երևի "ա-

Այս բոլորը պատմական իրողութիւններ են և կատարուել են մինչև 1904 թիւը։ Ուրեմն այդ բոլորը լաւ պէտք էր իմանար "15 տարի„ գոյութիւն ունեցող, 8 ամիս "նոր գործունէութիւն„ քարոզող և "վերածնող„ կուսակցութիւնը։ Բայց ի՞նչ ենք գտնում դրա փոխարէն։ Հնչակեան օրգան "Վերածնութիւն„ը երկար յօդուածներ է նուիրում հայկական սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան հիմնելու հարցին, այն էլ ոչ միայն Կովկասի համար, այլ համահայկական, "ինչպէս Մասիսից հիւսիս, նոյնպէս էլ հարաւ„, այսինքն Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի համար մի ընդհանուր հայկական կուսակցութիւն։ Դա հրաւէր է կարդում "հայ սոցիալ-դեմոկրատ խմբերին„ գալ և միասին ծրագրային խնդիրներ մշակել։ Խրատներ է կարդում "ավտորիտետ„ ձևացող հայ սոցիալ-դեմոկրատներին՝ թողնել այդ վնասակար յատկութիւնը, որպէսզի կարելի լինի հիմնել հայ սոցիալ-դեմոկրատական մի կուսակցութիւն։ Յայտարարում է, որ մի այդպիսի կուսակցութիւնը "պէտք է օգնէ և աջակցէ Ռուսաստանի ուրիշ յեղափոխական կուսակցութիւններին„, վերջապէս նոյնիսկ իր 16-րդ համարում "Վերածնութիւն„ը քննադատելով "Պրոլետարիատ„ին, ոչ միայն չէ յիշել այն պատմական փաստերի մասին, որ մենք թուեցինք վերևում, այլ մինչև իսկ չէ յիշել Ռուս. Սոց.-Դեմ. Բան. Կուս. անունը, որպէս թէ նա գոյութիւն չունենար։ Առաւել ևս, "Վերածնութեան„ 30-րդ համարում, առաջին անգամ լինելով, մենք գտնում ենք մի ընդարձակ յօդուած՝ նուիրուած Ռ. Ս.-Դ. Բ. Կ. երկրորդ համագումարին։ Այդտեղ մենք ի միջի այլոց կարդում ենք. "Հայ Սոց.-Դեմ. Կուս.

գիտացիական նկատումներով„ վերագրում են այդ գոյութիւն չունեցող խմբին "իր ազգային շրջանում ինքնավարութիւն, ժրաջան գործունէութիւն„ և այլն։ Թող այս քաջսից մի բան հասկանայ, ով որ կարող է։

գործունէութիւնը Ռուսաստանում պէտք է լինի մէկ և ընդհանուր Ռ. Սոց.-Դ. Կ. հետ»։ Ինչպէս տեսնում է ընթերցողը՝ այստեղ խօսւում է այնպիսի հայ սոց.-դեմ. կուսակցութեան մասին, որպիսին երևակայում էր ինքզինքն Հ. Կ. և կամ որպիսին նա ուզում էր լինել։ Ինչպէս պէտք էր սպասել, այստեղ և ոչ մի խօսքով յիշւած չէ ոչ «Պրօլետարիատ»ի խմբի մասին և ոչ այն բանի մասին, որ «այդ խումբը արդէն միացել է Ռուս. Կուս. հետ», ինչոր երկու շաբաթ յետոյ միայն «Վերածնութիւն»ը յանկարծ յիշեց։

Մեր այս բացատրութիւններից յետոյ, կարծում ենք, շատ պարզ է մի բան, — այն է՝ որ Հնչակեան այս «նոր կուրս»ը ոչ մի կապ չունի Ռուս. Սոց.-Դեմ. Կուս. կազմելու, կամ նրա երկրորդ համագումարի հետ, որովհետև այդ կուսակցութիւնը վաղուց ի վեր գոյութիւն ունէր և այն պայմաններն, որոնք պիտի դրդէին Հնչակեաններին իրենց նոր խօսքերը ասելու, շատոնց հրապարակի վրայ գրւած էին։ Ուրեմն «նոր կուրս»ի պատճառները պէտք է փնտռել հայկական իրականութեան մէջ։

1903-ի ամառը տեղի ունեցած հայոց եկեղեցական կալւածքների խլումը ռուս կառավարութեան ձեռքով և դրանից առաջ եկած շարժումները իրենց կողմից գլխաւոր պատճառներից մէկը դարձան «Դաշնակցութեան» տաքտիկայի մէջ փոփոխութիւններ առաջ բերելուն։ Ինչպէս յայտնի է այդ կուսակցութիւնը իր գոյութեան օրից մինչև եկեղեցական կալւածքների խլման ժամանակը բացասում էր Կովկասում յեղափոխական գործունէութիւն սկսելու պահանջը և ամեն կերպ աշխատում էր, որ առաջայ պէս բոլորի ուշադրութիւնը կենտրոնացած լինի տաճկահայ գատի վրայ։ Բայց եկեղեցական կալւածքների խլումից առաջացած շարժումներն այնքան զօրեղ էին, որ ստիպեցին «Դաշնակցութեան»՝ իր դիրքը չը կորցնելու համար, սկսել նաև Կովկասահայերի մէջ յեղափոխական գործունէութիւն։ Եւ ահա «Դրօշակը» 1903 Nº 7-ում

տալիս է առաջին սիգնալը՝ յայտարարելով թէ «պէտք է պատռել քարտէզների վրայ այս կամ այն աւազակապետի կամքով գծած սահմանները»։ Դրան հետևում է «Դաշնակցութեան» արիւնից և ոսկորից կազմւած «Ինքնապաշտպանութեան Կոմիտէի» լոյս աշխարհ գալը Կովկասում։ Այսպիսով "Դաշնակցութիւն"ն սկսում է իրագործել համահայկական կուսակցութեան այն ծրագիրը, համեմւած նոյնպիսի սոցիալիստական ֆրազէոլոգիայով, որպիսին առաջին անգամ ծրագրել էր Հնչակեան կուսակցութիւնը և քարոզել իր մամուլում։ Եւ որովհետև "Դաշնակցութիւն"ն անհամեմատ աւելի զօրեղ էր, թէ իր կազմով, թէ ռազմական զօրութեամբ, թէ նիւթական միջոցներով և ունէր հայ ժողովրդի վրայ աւելի ազդեցութիւն, քան Հնչ. կուսակց., շնորհիւ այդ առաւելութիւնների էլ նա բոլորովին տիրապետեց ասպարէզին և բաւարարութիւն տւեց Կովկասահայ ժողովրդի նացիոնալիստական ոգով սնւած մասի պահանջներին։ Սրանով "Դաշնակցութիւն" խլեց Հնչակեան կուսակութեան հենարաններից մէկը՝ — որպէս զուտ նացիոնալիստական կուսակցութիւն գործելու կարելիութիւնը՝ թողնելով նրան խախուտ և տատանւող դրութեան մէջ։

Միևնոյն ժամանակ մի այլ փոփոխութիւն տեղի էր ունենում հայ սոցիալ-դեմոկրատների շարքերում։ Եթէ Կովկասահայերի շարժումները մի կողմից նացիոնալիստների մէջ պահանջ ծագեցրին՝ իրենց տաքտիկայի մէջ փոփոխութիւններ մտցնելու, միւս կողմից՝ ցոյց տւին Ռուս. Սոց.-Դեմ. Բան. Կուսակցութեան անընդունակութիւնը, իր ներկայ կազմակերպութեամբ, հայկական իրականութեան մէջ կանոնաւոր հիմքերի վրայ դնել հայ պրօլետարիատի դասակարգային կուռ գործը, պաշտպանել այդ պրօլետարիատի շահերը, կուռել նացիոնալիստների ազդեցութեան դէմ և ղեկավարել Կովկասահայ ժողովրդի մէջ սկսւած ամեն մի յեղափոխան շարժում՝ յոգուտ և համաձայն սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքներին։ Եկեղե-

ցական կալուածքերի խլման ժամանակները կայացաւ Ռ. Ս.-Դ. Բ. Կուսակցութեան երկրորդ համագումարը։ Այստեղ ընդունուած բիւրօկրատական և շինծու կանոնագրութեան մէջ ոչ մի ուշադրութիւն չէր դարձուած Ռուսաստանի այլ ժողովրդների պրոլետարիատի մասնաւոր պահանջների վրայ, այլ ղեկավարելով սխալ հասկացուած կենտրոնացումով (ցենտրալիզմ), աշխատել էին անկարելի դարձնել զանազան ազգութիւնների պրոլետարիատի առանձին սոց.-դեմ. կազմակերպութիւնների գոյութիւնը միևնոյն կուսակցութեան մէջ։ Իսկ այդ բանը պատճառ դարձաւ հրէական բանւորական միութեան՝ «Բունդ»ի կուսակցութիւնից դուրս գալուն, ալգելք հանդիսացաւ ուրիշ ազգերի սոց.-դեմ. բան. կազմակերպութիւններին՝ կուսակցութեան հետ միանալու և անբաւականութիւն առաջ բերեց կուսակցութեան մէջ գործող հայ սոցիալ-դեմոկրատների մի մասի մէջ։ Այս վերջինները լաւ ըմբռնած լինելով հայ պրոլետարիատի պահանջները անկարելի էին գտնում Ռ. Ս.-Դ. Բ. Կուս. բ.-րդ համագումարում ընդունուած այդ կանոնագրութեան սահմաններում մի որևէ արդիւնաբեր գործ կատարել հայ պրոլետարիատի համար, և նախընտրեցին դուրս գալ այդ կուսակցութիւնից։ Նրանք միանում են ուրիշ անհատ հայ սոցիալ-դեմոկրատների հետ, որոնք այս կամ այն պատճառով չէին մտնում Ռ. Ս.-Դ. Բ. Կ. մէջ, և նրանց հետ միասին հիմնադրում են 1903 նոյեմբեր ամսուն Սոցիալ-Դեմոկրատական Բանւորական Հայ Կազմակերպութիւնը և հրապարակ են գալիս իրենց "Մանիֆէստ"ով, որտեղ աներկմիտ և որոշ պարզած էր այդ կազմակերպութեան երևան գալու պատճառները։ Սոց.-Դեմ. Բան. Հայ Կազմակերպութեան էութիւնը կայանում էր նրանում, որ նա ընդունելով, որ Ռուսաստանում պէտք է լինի մի և ընդհանուր սոց.դեմ. բան. կուսակցութիւն, միևնոյն ժամանակ, հակառակ Ռ. Ս.-Դ. Կուսակցութեան, պահանջում էր, որ այդ կուսակցու-

թիւնը կազմուած լինի Ռուսաստանում գոյութիւն ունեցող զանազան ազգութիւնների սոց.դեմ. բան. կազմակերպութիւնների միութիւնից, որոնք անկախ և ինքնավար լինեն իրենց ներքին գործերում, այսինքն այն խնդիրներում, որոնք մասնաւորապէս վերաբերում են միայն մի որևէ ազգի պրոլետարիատին։ Բացի դրանից՝ հակառակ նացիոնալիստ կուսակցութիւններին, նա ուզում էր գործել բացառապէս Կովկասում, յայտարարելով, որ Կովկասը՝ գտնւում է այլ քաղաքական-տնտեսական պայմանների մէջ, քան Տաճկաստանը, ուրեմն և այնտեղի յեղափոխական գործունէութիւնը պէտք է բոլորովին անկախ լինի տաճկահայկական գաղտից և համապատասխանէ տեղական պայմաններին. իսկ միւս կողմից՝ նա ուզում էր դառնալ միայն հայ պրոլետարիատի շահերի արտայայտող կուսակցութիւնը՝ առանց համահայկական "մի և ընդհանուր" յեղափոխական կուսակցութիւն լինելու միտումներ ունենալու։ Հէնց այդ պատճառներով էլ նա անհնայ պատերազմ պիտի յայտարէր Դաշնակցական և Հնչակեան կուսակցութիւններին, որոնք պրոլետարիատի դասակարգային կռիւը զոհում էին իրենց ազգայնական ձգտումներին և քարոզում էին հայ ազգի բոլոր դասակարգերի "համագործակցութիւն"։ Այս սոցիալ-դեմոկ. կազմակերպութեան երևան գալը կովկասահայ պրոլետարիատի մէջ, այլևս անկարելի էր դարձնում Հնչակեանների համար՝ իրենց կեղծ սոցիալիզմով շլացնել հայ պրոլետարիատին։ Իսկ դրանով ի հարկէ, Հնչակեան Կուսակցութիւնը զրկւում էր միւս հենարանից — "սոցիալիստ" անունով գործելու կարելիութիւնից, որի վրայ կռթնած նա դեռ կարող էր Կովկասում դեր խաղալ։ Եւ շնորհիւ այդ պատճառների էլ ծագում է առնում Հնչակեան "նոր կուրս"ը, որը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ մի նոր միջոց՝ Հնչակեան կուսակցութեան գոյութիւնը ապահովելու համար։

* * *

Այժմ ամփոփենք մեր բերած ցիտատների միտքը։

Ուրեմն, Հնչակեան Կուսակցութիւնը «ի նկատի ունենալով, որ Հայրենի Հողն ամենամեծ տարածութիւնն է Ցաճկա-Հայաստանը», այնտեղ էլ հաստատեց իր «յեղափոխական գործունէութեան ասպարէզը», նպատակ ունենալով «Հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագիրը միանգամից ընդ միշտ զատել Թիւրքական կայսրութեան ճակատագրից, ըստ որում պատմական պահանջ ու անհրաժեշտութիւն է ներկայանում — Հայ ազգային անկախութիւնը»*)։ (Ծրագ. Հնչ. Կուս. էջ 9)։ Դրան հասնելու համար քարոզում էր նա, իր կենտրոնական օրգան «Հնչակ»ի բերանով, որպէսզի «ամեն մի Հայ աշխարհագրական ինչ լայնութեան, ընկերային ինչ վիճակի մէջ էլ որ գտնուի», նուիրուի այդ «սուրբ նպատակին», որովհետև «գործը համազգային» է։ Նա յարձակւում է այն Հայ ինտելիգենտների և բանուորների վրայ, որոնք «մոռանալով այն ծանր, ահագին պարտականութիւնը» այսինքն «Հայաստանի անկախութիւն»ը՝ մասնակցում են Կովկասի բանուորական-յեղափոխական շարժման, «ընկնելով լոկ դասակարգային նեղ շահերի ետևից», երբ նրանք պէտք էր «առանց դասակարգային խտրութեան» նուիրուէին այդ պարտականութեան։ Դատապարտում է «Ռուս սոցիալ-դեմոկրատիան», որ նա իբր թէ «յանուն դասակարգային շահերի հեռացնում է Հայերին այս միակ նպատակից»։ Պախարակում է այն Հայերին, որոնք «իրենց դասակարգային եսական շահերը գեր ի վերոյ են դարձում ազգային ընդհանուր շահերից»։ Խրատում է Կովկասահայ բանուորներին «չը մասնակցել» տեղական բանուորական և սոցիալիստական շարժման։ Եւ այս բոլորը «Հայրենիքի», այսինքն Ցաճկա-Հայաստանի անկախութեան անունով։ Նոյն բանի համար էլ Հնչակեան Կուսակցութիւնն 1903-յունիսին յանկարծ փոխում է իր

*) Կուրսիվը բնագրումն է։

կարծիքը և նոր գիւտ է անում։ Դուրս է գալիս, որ «Թիւրքահայ դատի լուծումը կախուած է — այսօր աւելի քան առաջ — ռուսական քաղաքականութիւնից», «բացառապէս Թիւրքահայ հողի վրայ գործել այլևս անհետևանք է թուում այդ դատի լուծման համար» և «անկարելի է դառնում Ցաճկա-Հայաստանում թէկուզ մի թիզ գետին կորզել Թիւրք և ռուս պետութիւնների ճանկերից»։ Ուստի՝ եթէ Հնչակեան Կուսակցութիւնը չէր ուզում իր «յեղափոխական գործունէութիւնը դատապարտել կատարեալ մահացման — մանաւանդ իր այս երկար տարտամութիւնից յետոյ», պէտք էր «Ռուսաստանումն էլ կռել երկաթը՝ յեղափոխական զնդանի վրայ»։ Այդպիսով «ընդլայնում է յեղափոխական գործունէութեան ասպարէզը», ուստի պէտք է ունենալ "մի ընդհանուր կուսակցութիւն, մի ծրագրով, մի ընդհանուր ղեկավարութեամբ և մէկ և ընդհանուր կենտրոնական մարմնով,, որպէսզի կարելի լինի "միատեղի և միաժամանակ յեղափոխական գործունէութիւն սկսել թէ Թիւրքաց Հայաստանում և թէ Կովկասում,,։ Բայց Ռուսաստանում Հայ յեղափոխականների առանձին կուիւը ցարիզմի դէմ "ցնորք կը լինէր,,, եթէ գոյութիւն չունենային "Ռուսաստանի այն լայնածաւալ շարժումները, որոնք դեռ երեք-չորս տարի առաջ գոյութիւն չունէին,,։ Պարզ է այստեղից, որ Հայ յեղափոխականների պարտականութիւնն է՝ Հայաստանի անկախութեանը հասնելու համար, կռուել "միատեղի և միացած ոյժերով Ռուսաստանի միւս ազգութիւնների յեղափոխական տարրերի հետ միասին,,։ Մնում է միայն մի բան, այն է՝ որ "Ռուսաստանի բուն յեղափոխական տարրերի գործունէութիւնը սոցիալիստական է,,, ուստի՝ "բուն Հնչակեանութիւնն էլ Ռուսաստանում պէտք է լինի (իսկ Ցաճկաստանում, ուրեմն, կարող է մնալ նացիոնալիստական, չէ՞) և չէ՞ կարող չը լինել սոցիալիստական՝ առանց դաւաճանելու իր թէորիական սկզբունքներին...,, (Հնչ. 1904 Nr 1-2)։

Պարզ և հասկանալի։ Եթէ, օրինակ, "Հայրենի հողի մեծ տարածութեան", Տաճկա-Հայաստանի անկախութիւնը, կախուած լինէր Չինաստանից՝ Հնչակեան կուսակցութիւնը այնտեղ էս պիտի սկսէր "երկաթը ծեծել յեղափոխական զնդանի վրայ", և որովհետև Չինաստանի "բուն յեղափոխական" կազմակերպութիւնները նպատակ ունեն կոտորել եւրոպացիներին և պատնէշներ դնել եւրոպական կապիտալիզմի մուտք գործելուն Չինաստան, Հնչակեան կուսակցութիւնը հանգիստ սրտով կարող էր մասնակցել այդ բանին՝ համոզուած, որ "իսկական Հընչակեանութիւնն", էլ հակաեւրոպական և հակակապիտալիստական է եղել, և ապացոյց դրան նա կարող էր ցոյց տալ իր "նոր հոսանք", գրքոյկի այն կտորներն, որ մենք առաջ բերինք մեր գրքոյկի սկզբում (տես էջ 12)։ Ռուսաստանում դրա կարիքը չը կար, և նա յարմար է գտնում ուրիշ դիմակով, սոցիալիստ անունով հրապարակ գալ։ Մինչև այն ժամանակ, քանի Հնչակեանները երևակայում էին, որ կարող են մի ընդհանուր համահայկական կուսակցութիւն հիմնել, և այդպիսով իրենց կողմը գրաւել նաև կովկասահայ կուռող պրոլետարիատին, նրանք այդ բանը մեծ եռանդով քարոզում էին, նրանց "իդէն էր կազմած տեսնել մի ընդհանուր հայ սոց.-դեմ. կուսակցութիւն" և այդ ժամանակ նրանք գիտակցաբար մոռանում էին շատ իրողութիւններ և նոյնիսկ Ռուսաստանի Սոց.-Դեմ. Կուսակցութեան մասին։ Իսկ այն րոպէից, երբ նրանց այդ երազը չիրագործուեց և երբ նրանք, Սոց.-Դեմ. Բանւորական Հայ Կազմակերպութեան հրապարակ գալովը, իրենց կովկասահայ պրոլետարիատի վրայ մինչև այդ ունեցած ազդեցութիւնն էլ կորցնելու վտանգին ենթարկուեցին, այն ժամանակ նրանք փոխեցին իրենց տօնը և սկսեցին հաճոյախօսել Ռուսաստանի Սոց.-Դեմ. Կուս. հետ։ Նրանց այժմ, ընդհակառակը, սկսում է "անհասկանալի թուալ թէ ինչի հայերն պիտի ունենան իրենց առանձին սոց.-դեմ. կուսակցութիւն" և այլն։

Բացի գրանից՝ նրանք սկսում են փոփոխել իրականութիւնը և փաստերը՝ այնպէս, ինչպէս որ նրանք այժմ ձեռնտու և ցանկալի են Հնչակեանների համար, չեղածը՝ եղած յայտարարելով և ընդհակառակը։ Օրինակ՝ նրանք ասում են, որ "Ռ. Ս.-Դ. Բ. Կ. ընդգրկում է Ռուսաստանի զանազան ազգերի սոց.-դեմ. կազմակերպութիւնները, որոնք անկախ են իրենց ազգային շրջանում", և այլն*)։ Վերջապէս, սկսում է մի իսկական կատակերգութիւն։ Հնչակեանները սկսում են մինչև երկինք բարձրացնել Ռ. Ս.-Դ. Բ. Կ. ուղղութիւնը, հայհոյել նրա հակառակորդներին՝ միշտ զգացնել տալով, որ Հնչակեանները այնքան էլ պահանջկոտ չեն, որ նրանք համաձայն են դառնալ Ռուս. Կուսակցութեան "մի ճիւղը", որ թէև ունեն "առարկութիւններ" կուսակցութեան կազմակերպչական կանոնադրութեան դէմ, բայց դա երկրորդական խնդիր" է։ Մի խօքով Հնչակեանները դառնում են հայերիս մէջ Ռ. Ս.-Դ. Կ. փաստաբանը**)։

---

*) Այս բոլորը արդիւնք են միմիայն Հնչակեանների երևակայութեան։ Իրականութիւնն այն է, նախ, որ հրէական բանւորական միութեան՝ "Բունդ"ի Ռուս. սոց.-դեմ. կուս. դուրս գալուց յետոյ, այդ կուսակցութեան մէջ չը կայ և ոչ մի ազգի սոց.-դեմ. կազմ. և մինչև այսօր նրանից դուրս են մնում Հրէական, Լեհական, Լատիշների, Լիդօվցիների Ուկրայինցիների և այլ սոց.-դեմ. կազմակերպութիւնները։ Երկրորդ՝ որ Ռ. Ս.-Դ. Կ. Հընդունում ազգային սոց.-դեմ. կազմակերպութիւնների գոյութիւնը, ուրեմն խօսք էլ չէ կարող լինել այդ կազմակերպութիւնների ինքնուրոյնութեան մասին։

**) Երևի Հնչակեանների այս ծառայութիւնները վարձատրելու համար էլ Ռուս. Սոց.-Դեմ. Կուս. նրանց հետ միանալու համար բանակցութիւններ է սկսում ("Իսկրա" Nr 69) և նրա Ամստերդամի միջ. սոց. կոնգրէսի պատգամաւորներից Պլեխանովը յաճն է առնում լինել նաև

Հնչակեան այս յարմարելու քաղաքականութիւնը յիշեցնում է մեզ մանուկեան ճիրանները մատնուած այն տաճկահայերին, որոնք իրենց կեանքը փրկելու համար ստիպուած էին ընդունել մահմետականութիւն, բողոքականութիւն կամ թէ կաթոլիկութիւն: Բայց չը նայած դրան, նրանք բոլոր էութեամբ մնում էին հայ և լուսաւորչական, և բաւական էր մի յարմար առիթ, որպէսզի նրանք վերադառնային իրենց նախկին հաւատին: Նոյնն է անում և Հնչակեան կուսակցութիւնը, փրկելու համար ինքզինքն ընդմիշտ յեղափոխական ասպարէզից անյաստանալուց: Բայց... "Ժամանակը կը յայտնագործէ
Ինչոր թաքցնում է խորամանկութիւնն
Իր ծալքերի տակ: Նա որ ծածկում է
Իր մոլութիւնքը, ամենն ի վերջոյ
Ծաղը ու ծանակ է դարձնում նրան
Յաջողութիւն ձեզ,,: (Շէքսպիր, "Ամլեթ Լիր,,):

Ահա այս խօսքերով և անողոք կռուով պիտի պատասխանենք Հնչակեան կեղծ սոցիալիստներին գիտակցող հայ բանուորներս:

Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչը: Մեր կազմակերպութեան կողմից արդէն իր ժամանակին (տես «Սոցիալիստ» Nr 3 և «Վէսանիկ Բունդա» Nr 5) մատնանիշ արուել է Ռ. Ս.-Դ. Բ. Կ. այդ սխալ քայլերի բոլոր վնասները հայ պրոլետարիատի համար, որովհետև դրանով Հնչակեանները գիւրութիւն են ստանում հայ բանուորների մէջ իրենց նացիոնալիզմը սոցիալիզմի տեղ քշելու: Սակայն, ոչ համակրական վերաբերմունքը դէպի Ռ. Ս.-Դ. Կ. ոչ էլ Ամերիկայի սոց. մէջ. կենդրէսին իբրև "Հայ սոց.-դեմ. կուս.,, ներկայանալը, ոչինչ չը խանգարեց, Հնչակեաններին թաթուտում սպանել սոց.-դեմ. դարձած նախկին Հնչակեան բանուորին՝ Ա. Թամամեանցին, ծեծել սոց.-դեմ. պրոպագանդիստներին և այլն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՍՈՑ.-ԴԵՄ. ԲԱՆԵՒՈՐԱԿԱՆ ՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Սոց.-Դեմոկր. Բանուորական Հայ Կազմակերպութիւնը սկսելով արտասահմանում իւր հրատարակչական գործունէութիւնը, որի նպատակն է ստեղծել ինքնուրոյն և թարգմանական սոցիալիստական գրականութիւն հայերէն լեզուով, դիմում է բոլոր համակիր ընկերներին աջակցել իրեն՝ թէ գրական աշխատակցութեամբ և թէ նիւթապէս:

Կազմակերպութիւնս սրանով յայտարարում է նաև, որ իւր հաւանութեամբ հաստատուեց Արտասահմանեան Կոմիտէն, որը իւր ներկայացուցիչն է արտասահմանում:

Արտասահմանեան Կոմիտէի և "Սոցիալիստ,,ի խմբագրութեան հետ յարաբերութիւն ունենալու, կազմակերպութեանս հրատարակութիւնները ստանալու և գրական աշխատութիւններ, նամակներ, փող և այլն ուղարկելու համար դիմել հետևեալ հասցէով.

Imprimerie Arménienne. Rue BLANCHE, 3.
Plainpalais GENÈVE (Suisse)

Այս հասցէով պէտք է օգտուել միմիայն արտասահմանում, իսկ Ռուսաստանից ուղարկել արտասահմանում գտնուող ծանօթների միջոցով՝ խնդրելով յանձնել մեզ:

ՍՕՑ.-ԴԵՄ. ԲԱՆԻ. ՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Սարդեր և ճանճեր (Ռուսաստանում).
2. Լէօն Գոլդմանի ճառը (Ռուսաստանում).
3. Վաղէնի ճառը և Արիստոկրատների Պատասխանը (Ռուսաստանում).
4. «Սոցիալիստ» օրգան Սոց.-Դեմոկր. Բանւորական Հայ Կազմակերպութեան №№ 1, 2, 3 և 4-5.
5. Պ. Լաֆարգ — Սոցիալիստական Պարզ ճշմարտութիւններ. Գինը՝ 25 սանտիմ:
6. Էսալեմ — Թող Գակտերը խօսեն (Հնչակեան Կուսակցութեան մասին). Գինը՝ 50 սանտիմ:

ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄՆԵՆ

1. Ամստերդամի VI Միջազգային Սոցիալ. Կոնգրէսը.
2. Կ. Կաուցկի — Սոցիալական Յեղափոխութիւնը.
3. Ֆ. Էնգելս — Գիտական Սոցիալիզմի Զարգացումը.

Մեր Հասցէն.
Imprimerie Arménienne Rue Blanche, 3. Plainpalais
GENÈVE (Suisse).

«Ազգային գրադարան
NL0115176